ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

01.2016
Հունվար
02.2016
03.2016
04.2016
05.2016
06.2016
07.2016
08.2016
09.2016
10.2016
11.2016
12.2016

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

Թողարկման 23-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2016

Հունվար

թիվ 1 (209)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ

4 «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-2-Ն ՀՀ օրենքը

8 «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-3-Ն ՀՀ օրենքը

8 «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-5-Ն ՀՀ օրենքը

9 «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-13-Ն ՀՀ օրենքը

10 «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-14-Ն ՀՀ օրենքը

11 «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-15-Ն ՀՀ օրենքը

12 «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-16-Ն ՀՀ օրենքը

13 «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-23-Ն ՀՀ օրենքը

15 «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-24-Ն ՀՀ օրենքը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐՉԱԲԱՆՈՒՄԸ ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

20 ՀՀ ԿԲ խորհրդի և նախագահի որոշումները որոշ ՍՊԸ-ների գրավատնային գործունեության իրականացման լիցենզիաները ուժը կորցրած ճանաչելու, ինչպես նաև «Անելիք բանկ» ՓԲԸ-ի «էրեբունի» մասնաճյուղը գրանցելու վերաբերյալ

20 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները 1 ԱՍՊԸ-ի, 3 գրավատների նկատմամբ տուգանք կիրառելու և 2 արտարժույթի փոխանակման կետերի նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

20 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 257-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 145-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

21 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 258-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 344-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

30 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 259-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 116-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

31 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 260-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 17-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

32 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 261-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 16-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

33 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 262-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 14-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

34 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 263-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»

35 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 264-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մարտի 3-ի թիվ 93-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»

37 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 265-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի օգոստոսի 26-ի թիվ 261-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

38 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 266-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի փետրվարի 16-ի թիվ 68-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

39 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 267-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մարտի 15-ի թիվ 116-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

40 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 273-Ն որոշումը «Հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդի դադարեցման համար Կենտրոնական բանկի խորհրդի նախնական համաձայնության ստացման կարգը և պայմանները, ֆոնդի դադարեցման մասին գրանցում կատարելու համար ներկայացվող փաստաթղթերի ցանկը, ֆոնդի դադարեցման վերաբերյալ տեղեկատվության հրապարակման ձևը և կարգը «հաստատելու մասին»

50 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 274-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 12-ի թիվ 44-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

53 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 275-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 311-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

55 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 276-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի նոյեմբերի 5-ի թիվ 347-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

56 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 277-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հուլիսի 1-ի թիվ 194-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

57 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 279-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

59 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 292-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 230-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

60 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 299-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

61 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 1 պաշտոնական պարզաբանումը «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 149-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի վերաբերյալ»

64 ԴՐԱՄՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՆԵՐԸ

«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[**]

Հոդված 1. «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թ. նոյեմբերի 24-ի ՀՕ-142-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 3-րդ մասի երրորդ պարբերությունից հանել «վերստուգիչ հանձնաժողովի նախագահը,» բառերը:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 6. Երաշխավորված ավանդների հատուցման կազմակերպումը

1. Կենտրոնական բանկը հատուցման դեպքն առաջանալու մասին նույն օրը տեղեկացնում է Հիմնադրամին:

2. Կենտրոնական բանկը Հիմնադրամի հետ կնքած համագործակցության հուշագրով սահմանված ժամկետում, սակայն ոչ ուշ, քան մինչև սույն օրենքով սահմանված լրացուցիչ հայտարարություն հրապարակելը, ապահովում է հատուցման դեպքի օրվա դրությամբ անվճարունակ բանկի՝ ավանդների և ավանդատուների ցուցակների, ինչպես նաև ավանդատուի՝ անվճարունակ բանկի նկատմամբ ունեցած խնդրահարույց պարտավորությունների, դրանց չափի վերաբերյալ մանրամասն տեղեկությունների տրամադրումը Հիմնադրամին: Հիմնադրամն իրավունք ունի անվճարունակ բանկից պահանջելու ավանդների և ավանդատուների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ: Անվճարունակ բանկը պարտավոր է երեք աշխատանքային օրվա ընթացքում Հիմնադրամին տրամադրել պահանջվող լրացուցիչ տեղեկությունները:

Ավանդների և ավանդատուների ցուցակները պետք է ներառեն ավանդատուի անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, անվճարունակ բանկում ներդրված բոլոր ավանդների գումարների չափերը, հատուցման դեպքի օրվա դրությամբ հավելագրված տոկոսները, հատուցման ենթակա երաշխավորված ավանդի չափը, ինչպես նաև Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված այլ տեղեկություններ: Անվճարունակ բանկը պատասխանատու է ավանդների և ավանդատուների ցուցակներում ներառված տեղեկությունների ճշտության համար:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված տեղեկությունների պահպանման և տրամադրման նպատակով բանկերը պարտավոր են ունենալ ավանդների և ավանդատուների վերաբերյալ տեղեկատվական էլեկտրոնային համակարգ: Ավանդների և ավանդատուների վերաբերյալ տեղեկատվական էլեկտրոնային համակարգի վարման, տվյալների պահպանման և դրանց տրամադրման պայմանները սահմանվում են Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով:

4. Հիմնադրամը հատուցման դեպքի օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային http://www.azdarar.am կայքում և առնվազն հանրային մեկ լրատվամիջոցով հայտարարություն է հրապարակում հատուցման դեպքի մասին՝ նշելով երաշխավորված ավանդը ստանալու կարգը, ներառյալ՝ ավանդատուի գրավոր կամ էլեկտրոնային եղանակով պահանջի ներկայացման կարգը, անհրաժեշտ փաստաթղթերի ու տեղեկությունների ցանկը, պայմանները, եղանակները, ժամկետները: Հիմնադրամն այդ հայտարարությունը կարող է միաժամանակ հրապարակել նաև զանգվածային լրատվության այլ միջոցներում կամ օգտագործել ավանդատուներին տեղեկացնելու այլ եղանակ:

5. Հիմնադրամը երաշխավորված ավանդների հատուցումն իրականացնում է սույն հոդվածի 2-րդ մասում նշված ավանդների և ավանդատուների ցուցակների, ավանդա-

[*] *ՀՀՊՏ 2004 N 72 (371), 28.12.04:*
[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2015 թվականի դեկտեմբերի 21-ին (ՀՀՊՏ N 2 (1182), 13.01.16):

տուի ներկայացրած՝ իր երաշխավորված ավանդի հատուցումն ստանալու վերաբերյալ գրավոր կամ էլեկտրոնային եղանակով ներկայացված պահանջի, իսկ ավանդատուի գրավոր կամ էլեկտրոնային եղանակով ներկայացված պահանջի և Հիմնադրամի տրամադրած ավանդատուների ցուցակի միջև տեղեկությունների անհամապատասխանության դեպքում՝ նաև այդ պահանջը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա:

6. Ավանդատուների գրավոր կամ էլեկտրոնային եղանակով ներկայացված պահանջների ընդունումն իրականացնում է անվճարունակ բանկը, քանի դեռ Հիմնադրամը սույն հոդվածի 8-րդ մասով սահմանված լրացուցիչ հայտարարությամբ այլ բան չի հայտարարել: Գրավոր կամ էլեկտրոնային եղանակով ներկայացված պահանջը ստանալու օրվանից հետո՝ առավելագույնը մեկ աշխատանքային օրվա ընթացքում, անվճարունակ բանկը պարտավոր է այդ պահանջը փոխանցել Հիմնադրամին:

7. Ավանդատուն կարող է գրավոր կամ էլեկտրոնային եղանակով պահանջ ներկայացնել ոչ ուշ, քան հատուցման դեպքի օրվան հաջորդող երեք տարվա ժամկետում: Սույն մասում նշված ժամկետում ավանդատուի կողմից գրավոր կամ էլեկտրոնային եղանակով պահանջը չներկայացնելու դեպքում Հիմնադրամը տվյալ ավանդատուի երաշխավորված ավանդների հատուցում չի իրականացնում: Ավանդները վերադարձնում է անվճարունակ բանկը՝ պարտավորությունների մարման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգի համաձայն:

8. Հիմնադրամն օրենքի 29-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված 20-րդ աշխատանքային օրվանից, 10-րդ մասով սահմանված 15-րդ աշխատանքային օրվանից, 11-րդ մասով սահմանված 10-րդ աշխատանքային օրվանից և 12-րդ մասով սահմանված 7-րդ աշխատանքային օրվանից առնվազն մեկ օր առաջ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային http://www.azdarar.am կայքում հրապարակում է լրացուցիչ հայտարարություն, որտեղ նշվում են՝

ա) երաշխավորված ավանդների վճարումն իրականացնող բանկի և դրա մասնաճյուղերի անվանումները և հասցեները.

բ) ավանդատուի գրավոր կամ էլեկտրոնային եղանակով ներկայացված պահանջի և Հիմնադրամի տրամադրած ավանդատուների ցուցակի միջև տեղեկությունների անհամապատասխանության դեպքում՝ երաշխավորված ավանդի հատուցումը ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը: Կենտրոնական բանկի և Հիմնադրամի միջև կնքված համագործակցության հուշագրով կարող է սահմանվել լրացուցիչ հայտարարության հրապարակման այլ ժամկետ:

9. Ավանդատուներն անվճարունակ բանկում իրենց ավանդների վերաբերյալ փաստաթղթերին ծանոթանալու և սխալ հայտնաբերելու դեպքում պարզաբանումներ ստանալու համար կարող են դիմել անվճարունակ բանկ: Անվճարունակ բանկը պարտավոր է 3 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր պատասխանել ավանդատուին:»:

Հոդված 3. Օրենքի 8-րդ հոդվածում՝

1) 1-ին մասն ուժը կորցրած ճանաչել.

2) 3-րդ մասը «գրավոր» բառից հետո լրացնել «կամ էլեկտրոնային եղանակով ներկայացվող» բառերով.

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ մասով.

«5. Երաշխավորված ավանդի հատուցումը կարող է իրականացվել ինչպես կանխիկ, այնպես էլ անկանխիկ՝ ավանդատուի նշած հաշվին փոխանցման միջոցով:»:

Հոդված 4. Օրենքի 9-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի երկրորդ պարբերությունն ուժը կորցրած ճանաչել.

2) 3-րդ մասը «պարտավորություն» և «պարտավորության» բառերից առաջ լրացնել «խնդրահարույց» բառով.

3) 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ երկրորդ պարբերությունով.

«Խնդրահարույց պարտավորությունների տեսակները, հատուցման ենթակա ավանդի հաշվարկման կարգը սահմանում է Կենտրոնական բանկի խորհուրդը:».

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ մասով.

«8. Բանկի կամ մի քանի բանկերի՝ մեկ այլ բանկի միանալու դեպքում միացման պայմանագիրը օրենքով սահմանված կարգով Կենտրոնական բանկի կողմից հաս-

տատվելու և գրանցվելու պահից միացող յուրաքանչյուր բանկում առկա միևնույն ավանդատուին պատկանող ժամկետային ավանդները երաշխավորվում են որպես առանձին բանկային ավանդներ մինչև ավանդի պայմանագրով սահմանված ժամկետի ավարտը: Բանկի կամ մի քանի բանկերի՝ մեկ այլ բանկի միանալու դեպքում միացման պայմանագիրը օրենքով սահմանված կարգով Կենտրոնական բանկի կողմից հաստատվելու և գրանցվելու պահից մեկ տարվա ընթացքում, միացող յուրաքանչյուր բանկում առկա միևնույն ավանդատուին պատկանող ցպահանջ կամ սույն մասով սահմանված ժամկետային ավանդից բացի, ավանդի ժամկետի վերաբերյալ այլ պայմանով ավանդները երաշխավորվում են որպես առանձին բանկային ավանդներ: Սույն մասով սահմանված մեկ տարին կամ ավանդի պայմանագրով սահմանված ժամկետը լրանալու պահից այդ ավանդները երաշխավորվում են որպես մեկ ավանդ:»:

Հոդված 5. Օրենքի 12-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով.

«Կենտրոնական բանկը կարող է առանձին բանկերի համար սահմանել պարբերական երաշխիքային վճարների գումարի այլ չափ (արտահայտված տոկոսով կամ բացարձակ մեծությամբ)՝ կախված առանձին բանկի ռիսկայնության մակարդակից և (կամ) առանձին ավանդատեսակների տոկոսադրույքների մեծությունից՝ ըստ Կենտրոնական բանկի խորհրդի սահմանած չափանիշների, ընդ որում՝ տվյալ եռամսյակի համար բանկի կողմից վճարման ենթակա պարբերական երաշխիքային վճարների ընդհանուր չափը չի կարող գերազանցել հաշվետու եռամսյակի՝ տվյալ բանկի ֆիզիկական անձանց, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերին պատկանող բանկային ավանդների միջին օրական ցուցանիշի 0.15 տոկոսը:»:

2) 2-րդ մասի երկրորդ պարբերությունը «հինգերորդ» բառից հետո լրացնել «աշխատանքային» բառով:

Հոդված 6. Օրենքի 29-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 9-13-րդ մասերով.

«9. 2016 թվականի մարտի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը Հիմնադրամը պարտավոր է իրականացնել ավանդատուների պահանջով հատուցումները հատուցման դեպքի օրվան հաջորդող 20-րդ աշխատանքային օրվանից սկսած՝ ավանդատուի պահանջը ներկայացնելուց հետո՝ առավելագույնը երեք աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ սույն օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով նախատեսված դեպքերի: Հիմնադրամի միջնորդության հիման վրա Կենտրոնական բանկի խորհուրդը սույն մասում նշված աշխատանքային 20-օրյա ժամկետը կարող է երկարաձգել ևս 10 աշխատանքային օրով: Ավանդատուն կարող է պահանջը ներկայացնել ոչ շուտ, քան հատուցման դեպքի օրվան հաջորդող 20-րդ աշխատանքային օրվանից սկսած:

10. 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը Հիմնադրամը պարտավոր է իրականացնել ավանդատուների պահանջով հատուցումները հատուցման դեպքի օրվան հաջորդող 15-րդ աշխատանքային օրվանից սկսած՝ ավանդատուի պահանջը ներկայացնելուց հետո՝ առավելագույնը երեք աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ սույն օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով նախատեսված դեպքերի: Հիմնադրամի միջնորդության հիման վրա Կենտրոնական բանկի խորհուրդը սույն մասում նշված աշխատանքային 15-օրյա ժամկետը կարող է երկարաձգել ևս 7 աշխատանքային օրով: Ավանդատուն կարող է պահանջը ներկայացնել ոչ շուտ, քան հատուցման դեպքի օրվան հաջորդող 15-րդ աշխատանքային օրվանից սկսած:

11. 2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը Հիմնադրամը պարտավոր է իրականացնել ավանդատուների պահանջով հատուցումները հատուցման դեպքի օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրվանից սկսած՝ ավանդատուի պահանջը ներկայացնելուց հետո առավելագույնը երեք աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ սույն օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով նախատեսված դեպքերի: Հիմնադրամի միջնորդության հիման վրա Կենտրոնական բանկի խորհուրդը սույն մասում նշված աշխատանքային 10-օրյա ժամկետը կարող է երկարաձգել ևս 5 աշխատանքային օրով: Ավանդատուն կարող է պահանջը ներկայացնել ոչ

շուտ, քան հատուցման դեպքի օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրվանից սկսած:

12. 2023 թվականի հունվարի 1-ից Հիմնադրամը պարտավոր է իրականացնել ավանդատուների պահանջով հատուցումները հատուցման դեպքի օրվան հաջորդող 7-րդ աշխատանքային օրվանից սկսած՝ ավանդատուի պահանջը ներկայացնելուց հետո՝ առավելագույնը երեք աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ սույն օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով նախատեսված դեպքերի: Հիմնադրամի միջնորդության հիման վրա Կենտրոնական բանկի խորհուրդը սույն մասում նշված աշխատանքային 7-օրյա ժամկետը կարող է երկարաձգել ևս 3 աշխատանքային օրով: Ավանդատուն կարող է պահանջը ներկայացնել ոչ շուտ, քան հատուցման դեպքի օրվան հաջորդող 7-րդ աշխատանքային օրվանից սկսած:

13. Մինչև 2016 թվականի մարտի 1-ը Կենտրոնական բանկը և Հիմնադրամը կնքում են սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ և 8-րդ մասերով սահմանված համագործակցության հուշագիրը:»:

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2016 թվականի մարտի 1-ից:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
12 հունվարի 2016 թ., Երևան, ՀՕ-2-Ն

«Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին[**]

Հոդված 1. «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի նոյեմբերի 6-ի ՀՕ-262 օրենքի 31-րդ հոդվածում 2-րդ մասի «գ» կետի և «զ» կետի երկրորդ պարբերության «2 միլիոն» բառերը փոխարինել «10 միլիոն» բառերով, իսկ «1 միլիոն» բառերը՝ «5 միլիոն» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
12 հունվարի 2016 թ., Երևան, ՀՕ-3-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին»[***] Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին[**]

Հոդված 1. «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-135-Ն օրենքի 7-րդ հոդվածում՝

1) 5^1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով.

«Սույն մասից բացառություն են կազմում մինչև 2.000.000 դրամի չափով տրամադրվող գյուղատնտեսական նշանակության կրեդիտները, որոնք կարող են տրամադրվել ինչպես Հայաստանի Հանրապետության դրամով, այնպես էլ արտարժույթով:»:

2) 8^1-ին մասը «դրամով» բառից հետո լրացնել «բացառությամբ մինչև 2.000.000 դրամի չափով տրամադրվող գյուղատնտեսական նշանակության կրեդիտների, որոնք կարող են տրամադրվել ինչպես Հայաստանի Հանրապետության դրամով, այնպես էլ արտարժույթով» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
12 հունվարի 2016 թ., Երևան, ՀՕ-5-Ն

---

[*] *ՀՀՊՏ 2001 N 40 (172), 15.12.01:*
[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2015 թվականի դեկտեմբերի 21-ին (ՀՀՊՏ N 2 (1182), 13.01.16):
[***] *ՀՀՊՏ 2004 N 72 (371), 28.12.04:*

«Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին[**]

Հոդված 1. «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի հունիսի 17-ի ՀՕ-123-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածը «պահանջ» բառից հետո լրացնել «, իսկ «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին»[***] Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված վարկային բյուրոյի (այսուհետ՝ վարկային բյուրո) դեմ ներկայացված պահանջների դեպքում՝ նաև ոչ գույքային բնույթի պահանջ» բառերով:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով.

«Սույն մասով սահմանված ժամկետը չի տարածվում վարկային բյուրոյի դեմ ներկայացված բողոք-պահանջների վրա: Վարկային բյուրոյին ներկայացված բողոք-պահանջը վարկային բյուրոն քննում և հաճախորդին գրավոր վերջնական պատասխան է տրամադրում վարկային բյուրոյի բողոք-պահանջը ստանալու պահից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:»:

Հոդված 3. Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը «չափը» բառից հետո լրացնել «, վարկային բյուրոյի դեմ ներկայացված պահանջի դեպքում գույքային պահանջի չափը նշվում է, եթե առկա է գույքային պահանջ» բառերով:

Հոդված 4. Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 10-րդ կետով.

«10. Վարկային բյուրո՝ 140 000 դրամ:»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից երկշաբաթյա ժամկետում վարկային բյուրոն պարտավոր է ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակին վճարել միանվագ վճար՝ 140 000 Հայաստանի Հանրապետության դրամի չափով:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
12 հունվարի 2016 թ., Երևան, ՀՕ-13-Ն

---

[*] *ՀՀՊՏ 2008 N 47 (637), 23.07.08:*
[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2015 թվականի դեկտեմբերի 21-ին (ՀՀՊՏ N 2 (1182), 13.01.16):
[***] *ՀՀՊՏ 2016 N 2 (1182), 13.01.16:*

«Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին[**]

Հոդված 1. «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի հոկտեմբերի 22-ի ՀՕ-185-Ն օրենքի 20-րդ հոդվածում՝

1) 7-րդ մասը «դիմել» բառից հետո լրացնել ««Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին»[***] Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում և կարգով ֆինանսական համակարգի հաշտարարին (ֆիզիկական անձ վարկային տեղեկատվության սուբյեկտի դեպքում) կամ» բառերով.

2) 9-րդ մասը «դատարանի» բառից հետո լրացնել «կամ ֆինանսական համակարգի հաշտարարի» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
12 հունվարի 2016 թ., Երևան, ՀՕ-14-Ն

[*] *ՀՀՊՏ 2008 N 69 (659), 26.11.08:*
[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2015 թվականի դեկտեմբերի 21-ին (ՀՀՊՏ N 2 (1182), 13.01.16):
[***] *ՀՀՊՏ 2008 N 47 (637), 23.07.08:*

«Վարկային կազմակերպությունների մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին[**]

Հոդված 1. «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի մայիսի 29-ի ՀՕ-359-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9.1-ին հոդվածի վերնագիրը «կանոնադրություններին» բառից հետո լրացնել «և ներքին իրավական ակտերին» բառերով, իսկ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասով.

«Վարկային կազմակերպությունները պետք է ունենան գործարար վարվելակերպի կանոններ, որոնցով պետք է սահմանվեն՝

ա) վարկային կազմակերպության կողմից հաճախորդին տեղեկատվության ներկայացման ձևն ու կարգը.

բ) մինչև պայմանագրի կնքումը, պայմանագիրը կնքելիս և պայմանագրի գործողության ընթացքում հաճախորդներին տրամադրվող տեղեկատվության բովանդակությունը և այդ տեղեկատվության տրամադրման ձևը և կարգը, ինչպես նաև հաճախորդների հետ հաղորդակցման և հաճախորդների բողոք-պահանջների ներկայացման ու քննության կարգն ու պայմանները: Ընդ որում, բողոք-պահանջների ներկայացման ու քննության կարգն ու պայմանները որևէ կերպ չեն սահմանափակում դատարան կամ ֆինանսական համակարգի հաշտարարին կամ առևտրային արբիտրաժ դիմելու սպառողի իրավունքը.

գ) վարկային կազմակերպության և նրա կողմից առաջարկվող ծառայությունների մասին գովազդը և մարկետինգային գործունեությունը (քաղաքականությունը).

դ) հաճախորդների անձնական տվյալների պահպանման և դրանց անվտանգ օգտագործման կանոնները.

ե) հրապարակման ենթակա տեղեկատվությունը և այդ տեղեկատվության հրապարակման կարգը:

Կենտրոնական բանկը կարող է սահմանել սույն մասում նշված վարկային կազմակերպության գործարար վարվելակերպի կանոնների կիրարկման եղանակներին և ընթացակարգերին վերաբերող պահանջներ:

Վարկային կազմակերպությունները պարտավոր են հետևել սույն մասով նախատեսված գործարար վարվելակերպի կանոններին:

Սույն հոդվածով նախատեսված գործարար վարվելակերպի կանոնների պահանջների՝ վարկային կազմակերպության կողմից խախտման փաստը դատարանի, արբիտրաժի կամ ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից հաստատվելու դեպքում վարկային կազմակերպությունը պարտավոր է ֆիզիկական անձ հաճախորդին վճարել 300 000 (երեք հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ: Նշված դրույթը չի կարող մեկնաբանվել որպես վնասների հատուցում պահանջելու ֆիզիկական անձ հաճախորդի իրավունքը սահմանափակող կամ բացառող դրույթ: Սույն պարբերությունը կիրառվում է այնքանով, որքանով այլ օրենքներով նշված հարցերի վերաբերյալ վարկային կազմակերպությունների համար այլ կարգավորում նախատեսված չէ:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 1-ին հոդվածով Օրենքի 9.1-ին հոդվածում լրացվող վերջին պարբերության, որն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի մեկից:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
12 հունվարի 2016 թ., Երևան, ՀՕ-15-Ն

---

[*] *ՀՀՊՏ 2002 N 23 (198), 3.07.02:*
[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2015 թվականի դեկտեմբերի 21-ին (ՀՀՊՏ N 2 (1182), 13.01.16):

«Բանկերի և բանկային գործունեության մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին[**]

Հոդված 1. «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի հունիսի 30-ի ՀՕ-68 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 43-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մասով.

«1.1. Բանկերը պետք է ունենան գործարար վարվելակերպի կանոններ, որոնցով պետք է սահմանվեն՝

ա) հաճախորդներին տեղեկատվության ներկայացման ձևն ու կարգը.

բ) մինչև պայմանագրի կնքումը, պայմանագիրը կնքելիս և պայմանագրի գործողության ընթացքում հաճախորդներին տրամադրվող տեղեկատվության բովանդակությունը և այդ տեղեկատվության տրամադրման ձևը և կարգը, ինչպես նաև հաճախորդների հետ հաղորդակցման և հաճախորդների բողոք-պահանջների ներկայացման ու քննության կարգն ու պայմանները:

Ընդ որում, բողոք-պահանջների ներկայացման ու քննության կարգն ու պայմանները որևէ կերպ չեն սահմանափակում դատարան կամ ֆինանսական համակարգի հաշտարարին կամ առևտրային արբիտրաժ դիմելու սպառողի իրավունքը:

գ) բանկի և նրա կողմից առաջարկվող ծառայությունների մասին գովազդը և մարկետինգային գործունեությունը (քաղաքականությունը):

Կենտրոնական բանկը կարող է սահմանել սույն մասում նշված բանկերի գործարար վարվելակերպի կանոնների կիրարկման եղանակներին և ընթացակարգերին վերաբերող պահանջներ:

Կենտրոնական բանկը կարող է սահմանել սույն մասում նշված վարկային կազմակերպության գործարար վարվելակերպի կանոնների կիրարկման եղանակներին և ընթացակարգերին վերաբերող պահանջներ:

Բանկերը պարտավոր են հետևել սույն մասով նախատեսված գործարար վարվելակերպի կանոններին:

Սույն մասով նախատեսված գործարար վարվելակերպի կանոնների պահանջների՝ բանկի կողմից խախտման փաստը դատարանի, արբիտրաժի կամ ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից հաստատվելու դեպքում բանկը պարտավոր է ֆիզիկական անձ հաճախորդին վճարել 300 000 (երեք հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ: Ընդ որում, նշված դրույթը չի կարող մեկնաբանվել որպես վնասների հատուցում պահանջելու ֆիզիկական անձ հաճախորդի իրավունքը սահմանափակող կամ բացառող դրույթ: Սույն պարբերությունը չի տարածվում «Բանկային ավանդների ներգրավման մասին»[***] Հայաստանի Հանրապետության օրենքով կարգավորվող հարաբերությունների վրա, իսկ բանկի գործունեությունը կարգավորող այլ հարաբերությունների նկատմամբ սույն պարբերությունը կիրառելի է այնքանով, որքանով այլ բան նախատեսված չէ այդ հարաբերությունները կարգավորող այլ օրենքներով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 1-ին հոդվածով լրացվող 43-րդ հոդվածի 1.1-ին մասի վերջին պարբերության, որն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի մեկից:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
12 հունվարի 2016 թ., Երևան, ՀՕ-16-Ն

---

[*] *ՀՀԱԺՏ 1996 N 12:*
[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2015 թվականի դեկտեմբերի 21-ին (ՀՀՊՏ N 2 (1182), 13.01.16):
[***] *ՀՀՊՏ 2008 N 47 (637), 23.07.08):*

«Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին**

Հոդված 1. «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի հոկտեմբերի 11-ի ՀՕ-195-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 98-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետում «արժեթղթերի սեփականատերերի ռեեստրում» բառերը փոխարինել «արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրում» բառերով, իսկ 6-րդ կետի «բաժնետոմսերի սեփականատերերի վերաբերյալ» բառերը՝ «բաժնետոմսերի սեփականատերերի (անվանատերերի) վերաբերյալ» բառերով:

Հոդված 2. Օրենքի 176-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «գ» ենթակետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Օրենքի 197-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 197. Սեփականատերերի (անվանատերերի) ցուցակի տրամադրումը

1. Թողարկողն իրավունք ունի ցանկացած ժամանակ Կենտրոնական դեպոզիտարիայից պահանջելու թողարկողի կողմից թողարկված արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ցուցակը՝ այդ մասին համապատասխան հարցում ներկայացնելով Կենտրոնական դեպոզիտարիային: Այն դեպքում, երբ անվանատերը լիազորված է հանդես գալու արժեթղթի սեփականատիրոջ անունից (այսուհետ սույն հոդվածում՝ իրավասու անվանատեր), ապա արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ցուցակը կարող է սեփականատիրոջ անվան (անվանման) փոխարեն ներառել իրավասու անվանատիրոջ անունը (անվանումը):

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված հարցումն ստանալուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, Կենտրոնական դեպոզիտարիան հարցում է ուղարկում իր մոտ տվյալ թողարկողի արժեթղթերի հաշիվներ ունեցող պահառուներին (անվանատերերին)՝ պահանջելով տրամադրել տվյալ թողարկողի արժեթղթերի սեփականատերերի, ինչպես նաև իրավասու անվանատերերի վերաբերյալ տեղեկություններ: Սույն հոդվածի իմաստով տվյալ թողարկողի արժեթղթերի սեփականատերերի եւ իրավասու անվանատերերի վերաբերյալ տեղեկություններ են համարվում այն տեղեկությունները, որոնք, «Բաժնետիրական ընկերությունների մասին»*** Հայաստանի Հանրապետության օրենքի 51-րդ հոդվածի համաձայն, ենթակա են ներառման ընկերության բաժնետերերի ռեեստրում:

3. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող պահառուները (անվանատերերը) (այսուհետ սույն հոդվածում՝ «Հայաստանյան անվանատեր») և Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող պահառուները (անվանատերերը) (այսուհետ սույն հոդվածում՝ «Օտարերկրյա անվանատեր») պարտավոր են Կենտրոնական դեպոզիտարիայի հարցումը ստանալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական դեպոզիտարիային տրամադրել տվյալ թողարկողի արժեթղթերի իրավասու անվանատերերի վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև, բացառությամբ սույն հոդվածի 5-րդ և 6-րդ մասերում նշված դեպքերի, տվյալ թողարկողի արժեթղթերի սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ:

4. Հայաստանյան և Օտարերկրյա անվանատերերը պարտավոր են սույն հոդվածի 3-րդ մասում նշված պարտականությունների կատարման նպատակով ձեռնարկել բոլոր անհրաժեշտ և ողջամիտ գործողությունները տվյալ թողարկողի արժեթղթերի սեփականատերերի և իրավասու անվանատերերի վերաբերյալ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից պահանջվող տեղեկությունները բացահայտելու, հավաքագրելու և սույն մասում նշված ժամկետում Կենտրոնական դեպոզիտարիային տրամադրելու համար:

---

* ՀՀՊՏ 2007 N 53 (577), 31.10.07:
** Ոչ պաշտոնական հրատարակություն:
Ընդունված է 2015 թվականի դեկտեմբերի 21-ին (ՀՀՊՏ N 4 (1184), 20.01.16):
*** ՀՀՊՏ 2001 N 34 (166), 06.11.01:

5. Բացառությամբ սույն հոդվածի 7-րդ մասում նշված դեպքի, Հայաստանյան անվանատերերն իրավունք ունեն Կենտրոնական դեպոզիտարիային չտրամադրելու վերջինիս կողմից պահանջվող՝ տվյալ թողարկողի արժեթղթերի սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ, եթե միաժամանակ առկա են ստորև նշված բոլոր պայմանները.

1) տվյալ թողարկողի արժեթղթերը կամ դրանց մի մասը հաշվառվում են տվյալ Հայաստանյան անվանատիրոջ մոտ Օտարերկրյա անվանատիրոջ հաշվում, և

2) Հայաստանյան անվանատերը հարցում է ուղարկել Օտարերկրյա անվանատիրոջը՝ պահանջելով տրամադրել տվյալ թողարկողի արժեթղթերի սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ, և

3) Օտարերկրյա անվանատերը, ձեռնարկելով սույն հոդվածի 4-րդ մասում նշված գործողությունները, սույն հոդվածի 6-րդ մասում նշված հիմքերով հրաժարվել է Հայաստանյան անվանատիրոջը տրամադրել տվյալ թողարկողի արժեթղթերի սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ:

6. Բացառությամբ սույն հոդվածի 7-րդ մասում նշված դեպքի, Օտարերկրյա անվանատերերն իրավունք ունեն Կենտրոնական դեպոզիտարիային չտրամադրելու տվյալ թողարկողի արժեթղթերի սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ, եթե՝

1) դա արգելված է օտարերկրյա օրենսդրությամբ կամ նախատեսված է տվյալ օտարերկրյա անվանատիրոջ եւ իր հաճախորդի միջեւ կնքված պայմանագրով, կամ

2) տվյալ օտարերկրյա անվանատիրոջ հաճախորդը հրաժարվում է տրամադրել պահանջվող տեղեկությունները, կամ

3) պահանջվող տեղեկության տրամադրումը տվյալ օտարերկրյա անվանատիրոջ համար առաջացնում է էական ծախսեր:

7. Հայաստանյան անվանատերերը կամ Օտարերկրյա անվանատերերը իրավունք չունեն սույն հոդվածի համապատասխանաբար 5-րդ և 6-րդ մասերում նշված հիմքերով հրաժարվելու թողարկողի արժեթղթերի սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ տրամադրելուց, եթե նման պահանջ ներկայացվել է Հայաստանի Հանրապետության պետական մարմնի կողմից՝ իրենց իրավասությունների շրջանակներում:

8. Օտարերկրյա անվանատիրոջ կողմից Կենտրոնական դեպոզիտարիայի կամ Հայաստանյան անվանատիրոջ՝ սույն հոդվածի 2-րդ կամ 5-րդ մասի հարցման մեջ նշված՝ տվյալ թողարկողի արժեթղթերի սեփականատերերի մասին տվյալները սույն հոդվածի 5-րդ կամ 6-րդ մասում թվարկված հիմքերով չտրամադրելու դեպքում Օտարերկրյա անվանատերը տվյալ թողարկողի արժեթղթերի սեփականատերերի առջև պատասխանատվություն է կրում դրա հետևանքով պատճառված վնասների համար:

9. Կենտրոնական դեպոզիտարիան պարտավոր է տվյալ թողարկողի արժեթղթերի սեփականատերերի (իրավասու անվանատերերի) ցուցակը տրամադրել թողարկողին՝ սույն հոդվածի 1-ին մասում նշված հարցումը ստանալու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

10. Այն դեպքում, երբ Կենտրոնական դեպոզիտարիայի ուղարկած՝ սույն հոդվածի 2-րդ մասի հարցման մեջ նշված տվյալները պահառուները (անվանատերերը) Կենտրոնական դեպոզիտարիային ուղարկում են սույն հոդվածում նշված ժամկետների ուշացմամբ կամ ուղարկում են ճշգրտված կամ լրացուցիչ տվյալներ, ապա Կենտրոնական դեպոզիտարիան պարտավոր է ուշացումով ստացված և (կամ) ճշգրտված և (կամ) լրացուցիչ տվյալներն ուղարկել սույն հոդվածի 1-ին մասում նշված հարցումը ներկայացրած թողարկողին այդ տվյալները ստանալու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Սույն մասին համապատասխան՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից թողարկողին ուղարկված տվյալների ստացման փաստն այդ թողարկողի համար իրավական հետևանքներ է առաջացնում միայն սույն օրենքով կամ Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով՝ նախատեսված դեպքերում:

11. Սույն հոդվածի կիրառման նպատակով պահառուների (անվանատերերի) ռեզիդենտությունն ու ոչ ռեզիդենտությունը որոշվում է «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին»* Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

* *ՀՀՊՏ 2004 N 72 (371), 28.12.04:*

12. Արժեթղթերի սեփականատերերի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման՝ սույն հոդվածով սահմանված պահանջը չի կիրառվում այն դեպքերի նկատմամբ, երբ անվանատերը ներդրումային ֆոնդի պահառու կամ կառավարիչ է պայմանագրային ներդրումային ֆոնդի ակտիվներում ներառված արժեթղթերի մասով:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
14 հունվարի 2016 թ., Երևան, ՀՕ-23-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«Բաժնետիրական ընկերությունների մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին[**]

Հոդված 1. «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի սեպտեմբերի 25-ի ՀՕ-232 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ մասով.

«7. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) ***անվանատեր***՝ «Արժեթղթերի շուկայի մասին»[***] Հայաստանի Հանրապետության օրենքի 197-րդ հոդվածի 1-ին մասում նշված իրավասու անվանատեր: Սույն օրենքում այլ բան նախատեսված չլինելու դեպքում անվանատեր հասկացությունը ներառում է հայաստանյան անվանատերերին և օտարերկրյա անվանատերերին.

2) ***հայաստանյան անվանատեր***՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 197-րդ հոդվածի 3-րդ մասում նշված հայաստանյան պահառու (անվանատեր).

3) ***օտարերկրյա անվանատեր***՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 197-րդ հոդվածի 3-րդ մասում նշված օտարերկրյա պահառու (անվանատեր).

4) ***ռեեստրավար***՝ սույն օրենքի 51-րդ հոդվածին համապատասխան՝ Ընկերության բաժնետերերի (անվանատերերի) ռեեստրի վարումն իրականացնող անձ:»:

Հոդված 2. Օրենքի 15-րդ հոդվածից և 68-րդ հոդվածի 12-րդ մասից հանել բոլոր «անվանատերերի» բառերը:

Հոդված 3. Օրենքի 51-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «Ընկերությունների» բառը փոխարինել «Բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքի՝ ընկերությունների» բառերով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ մասով.

«Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից սեփական բաժնետոմսերի ռեեստրի վարումը չի համարվում սույն հոդվածի պահանջների խախտում:»:

---

[*] *ՀՀՊՏ 2001 N 34 (166), 06.11.01:*
[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2015 թվականի դեկտեմբերի 21-ին (ՀՀՊՏ N 4 (1184), 20.01.16):
[***] *ՀՀՊՏ 2007 N 53 (577), 31.10.07:*

Հոդված 4. Օրենքի 69-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի երկրորդ նախադասությունը «հեռակա կարգով քվեարկության (հարցման) միջոցով» բառերից հետո լրացնել «բացառությամբ՝ սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքերի» բառերով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ մասով.

«5. Այն դեպքում, երբ ընկերության բաժնետերերի (անվանատերերի) ցուցակում ներառված են նաև անվանատերեր, ապա նշված անվանատերերն իրավասու են քվեարկելու հեռակա կարգով քվեարկության (հարցման) միջոցով:»:

Հոդված 5. Օրենքի 70-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի (անվանատերերի) ցուցակը կազմվում է խորհրդի կողմից սահմանված տարվա, ամսվա, ամսաթվի դրությամբ ռեեստրավարի՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 197-րդ հոդվածով սահմանված կարգով տված տվյալների (ցուցակի) հիման վրա: Ընդ որում, եթե ժողովի գումարման ամսաթվից առնվազն հինգ աշխատանքային օր առաջ ռեեստրավարն ընկերությանը տրամադրում է «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 197-րդ հոդվածի 10-րդ մասում նշված՝ ուշացումով ստացված և (կամ) ճշգրտված և (կամ) լրացուցիչ տվյալներ ընկերության բաժնետերերի (անվանատերերի) մասին, ապա ընկերությունը պարտավոր է ընկերության այդ բաժնետերերին (անվանատերերին) թույլատրել սույն օրենքով սահմանված կարգով մասնակցելու ժողովին, սակայն ընկերությունը պարտավոր չէ այդ բաժնետերերին (անվանատերերին) ծանուցել ժողովի գումարման մասին:».

2) 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել.

3) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի (անվանատերերի) ցուցակը պետք է տվյալներ պարունակի յուրաքանչյուր բաժնետիրոջ անվան (անվանման), գտնվելու (բնակության) վայրի և բաժնետիրոջը պատկանող բաժնետոմսերի մասին: Եթե ռեեստրավարի կողմից «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 197-րդ հոդվածով սահմանված կարգով տրված տվյալներում (ցուցակում) նույն հոդվածում նշված հիմքերով չեն բացահայտվում Ընկերության որոշ կամ բոլոր բաժնետերերի մասին տեղեկություններ, ապա Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի (անվանատերերի) ցուցակում չբացահայտված բաժնետերերին վերաբերող տվյալների փոխարեն պետք է նշվեն այդ բաժնետերերին ներկայացնող անվանատիրոջ (անվանատերերի) անվան (անվանման), գտնվելու վայրի և անվանատիրոջ անունով գրանցված բաժնետոմսերի մասին տվյալներ՝ ըստ դրանց տեսակների և դասերի:»:

4) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի (անվանատերերի) ցուցակը պետք է ծանոթացման նպատակով տրամադրվի Ընկերության այն բաժնետերերին, որոնք գրանցված են Ընկերության բաժնետերերի (անվանատերերի) ռեեստրում և որպես սեփականատեր տիրապետում են Ընկերության քվեարկող բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսին:»:

Հոդված 6. Օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) չորրորդ պարբերության սկիզբը լրացնել «Բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասի յոթերորդ պարբերությամբ նախատեսված դեպքի» բառերով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ յոթերորդ պարբերությունով.

«Ընկերության բաժնետոմսերի անվանատիրոջ կողմից բաժնետիրոջ (բաժնետերերի) անունից ժողովին մասնակցելու համար լիազորագիր չի պահանջվում, և անվանատիրոջ լիազորությունները հավաստվում են սույն օրենքի 96.1-ին հոդվածով սահմանված կարգով:»:

Հոդված 7. Օրենքի 79-րդ հոդվածի 3-րդ մասի «դ» կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. «Եթե քվեարկությանը բաժնետիրոջ (բաժնետերերի) անունից մասնակցում է անվանատերը, ապա քվեաթերթիկը պետք է դաշտեր

պարունակի, որտեղ հնարավոր լինի նշել, թե անվանատիրոջ կողմից ներկայացվող որքան բաժնետեր է քվեարկել «կողմ», «դեմ» կամ «ձեռնպահ» քվեարկության դրված յուրաքանչյուր հարցի վերաբերյալ:»:

Հոդված 8. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 13.1-ին գլխով.

«ԳԼՈՒԽ 13.1
ԱՆՎԱՆԱՏԻՐՈՋ ՄԻՋՈՑՈՎ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Հոդված 96.1. Բաժնետիրոջ անունից գործելու անվանատիրոջ լիազորությունը

1. Անվանատերը, սույն օրենքի ուժով և սույն հոդվածի 2-րդ մասում նշված պայմանագրի հիման վրա, առանց առանձին լիազորագրի ներկայացման լիազորված է իրականացնել իր անունով գրանցված բաժնետոմսերով ամրագրված բոլոր իրավունքները և պարտականությունները, եթե անվանատիրոջ և բաժնետիրոջ միջև կնքված՝ սույն հոդվածի 2-րդ մասում նշված պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

2. Անվանատիրոջ՝ սույն հոդվածի 1-ին մասում նշված լիազորությունները ծագում են անվանատիրոջ և բաժնետիրոջ միջև բաժնետոմսերի պահառության կամ նմանատիպ այլ պայմանագրի հիման վրա, որով նախատեսված է սույն հոդվածի 1-ին մասում նշված լիազորություններն անվանատիրոջը փոխանցելու վերաբերյալ պայման: Ընդ որում, եթե ռեեստրավարի տված՝ սույն հոդվածի 3-րդ մասում նշված փաստաթղթում տվյալ անձը նշված է որպես ընկերության որոշ կամ բոլոր բաժնետոմսերի անվանատեր, ապա ենթադրվում է, որ այդ անվանատերը սույն հոդվածի սույն մասում նշված պայմանագրով լիազորված է իր կողմից ներկայացվող բաժնետիրոջ (բաժնետերերի) անունից իրականացնել սույն հոդվածի 1-ին մասում նշված լիազորությունները: Թողարկողը չի կարող անվանատիրոջից պահանջել ներկայացնելու անվանատիրոջ և նրա հաճախորդի միջև կնքված պայմանագիրը:

3. Անվանատիրոջ՝ սույն հոդվածի 1-ին մասում նշված լիազորություններն ընկերության առջև հավաստվում են ռեեստրավարի տված համապատասխան փաստաթղթով (տեղեկանք, բաժնետոմսերի սեփականատերերի (անվանատերերի) ցուցակ և այլն), որտեղ նշված է տվյալ անձի՝ ընկերության որոշ կամ բոլոր բաժնետոմսերի անվանատեր լինելու փաստը:

Հոդված 96.2. Անվանատիրոջ՝ բարեխիղճ գործելու պարտականությունը

1. Բաժնետիրոջ անունից սույն օրենքի 96.1-ին հոդվածի 1-ին մասում նշված գործողությունները կատարելիս անվանատերը պարտավոր է գործել ողջամիտ և բարեխիղճ՝ ելնելով բաժնետիրոջ շահերից, բաժնետիրոջ կողմից անվանատիրոջը տրված ցուցումներից և Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի պահանջներից:

2. Անվանատերը պատասխանատվություն է կրում բաժնետիրոջ առջև անվանատիրոջ գործողությունների կամ անգործության հետևանքով բաժնետիրոջը պատճառված վնասների համար:

Հոդված 96.3. Ընկերության և բաժնետիրոջ միջև տեղեկությունների փոխանակումն անվանատերերի միջոցով

1. Այն դեպքում, երբ բաժնետերերի (անվանատերերի) ռեեստրում նշված է արժեթղթերի անվանատերը, ապա սույն օրենքի համաձայն՝ ընկերության կողմից բաժնետիրոջը տրամադրման ենթակա բոլոր տեղեկությունները, մասնավորապես՝ ծանուցումները, տեղեկացումները, քվեաթերթիկները, հաշվետվությունները, ընկերությունը տրամադրում է տվյալ բաժնետիրոջը ներկայացնող անվանատիրոջը:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված տեղեկությունները սույն հոդվածի 1-ին մասում նշված անվանատիրոջը փոխանցելու պահից ընկերությունը համարվում է նշված տեղեկությունները բաժնետիրոջը փոխանցելու իր պարտականությունը կատարած:

3. Սույն օրենքի համաձայն՝ բաժնետիրոջ կողմից ընկերությանը տրամադրման ենթակա բոլոր տեղեկությունները բաժնետերն իրավունք ունի տրամադրելու տվյալ բաժնետիրոջը ներկայացնող անվանատիրոջ միջոցով:

4. Սույն հոդվածի 3-րդ մասում նշված տեղեկությունները սույն հոդվածի 3-րդ մասում նշված անվանատիրոջ կողմից ընկերությանը փոխանցելու պահից բաժնետերը

համարվում է նշված տեղեկություններն ընկերությանը փոխանցելու իր պարտականությունը կատարած:

Հոդված 96.4. Ընկերության արժեթղթերից անվանատիրոջ միջոցով եկամուտներ վճարելը

1. Եթե ընկերության բաժնետիրոջ (բաժնետերերի) անունից հանդես է գալիս օտարերկրյա անվանատերը, ապա այդ բաժնետիրոջը (բաժնետերերին) ընկերության կողմից վճարման ենթակա գումարները ընկերությունը՝ բաժնետիրոջը (բաժնետերերին) փոխանցելու նպատակով, վճարում է տվյալ բաժնետիրոջը (բաժնետերերին) ներկայացնող օտարերկրյա անվանատիրոջ նշած բանկային հաշվին՝ իրականացնելով հարկային գործակալի պարտականությունները:

2. Օտարերկրյա անվանատերը պարտավոր է ընկերության կողմից ստացված՝ սույն հոդվածի 1-ին մասում նշված գումարները փոխանցել բաժնետիրոջը՝ այդ օտարերկրյա անվանատիրոջ և բաժնետիրոջ միջև կնքված պայմանագրով սահմանված կարգով:»:

Հոդված 9. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
14 հունվարի 2016 թ., Երևան, ՀՕ-24-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Ուժը կորցրած են ճանաչվել*** «Արմաստ», «Մանի ընդ Քոմփընի» և «Պանտերա Կրեդիտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների գրավատնային գործունեության իրականացման լիցենզիաները (որոշումներ թիվ 3Ա, 4Ա, 6Ա):
- ***Գրանցվել է*** «Անելիք բանկ» փակ բաժնետիրական ընկերության «էրեբունի» մասնաճյուղը (որոշում թիվ 1/07Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 1 ապահովագրական սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, 3 գրավատների նկատմամբ ***կիրառվել է տուգանք***՝ 3590000 դրամ գումարի չափով (որոշումներ թիվ 1/15Ա, 1/17Ա, 1/18Ա, 1/24Ա) և 2 արտարժույթի փոխանակման կետերի ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/02Ա, 1/29Ա):

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 145-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով ճշգրտել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող տեղեկատվության կազմը,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի «Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» կանոնակարգ 1-ը հաստատելու մասին» թիվ 145-Ն որոշմամբ հաստատված «Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» կանոնակարգ 1-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 1) կատարել հետևյալ փոփոխությունները.
   1) Կանոնակարգ 1-ի 19-րդ և 93-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել,
   2) Կանոնակարգ 1-ի 25-րդ կետում «և 19-րդ կետով» բառերը փոխարինել «կետով» բառով,
   3) Կանոնակարգ 1-ի 26-րդ կետում «և 19-րդ կետերով» բառերը փոխարինել «կետով» բառով,
   4) Կանոնակարգ 1-ի 111-րդ կետի առաջին նախադասությունից հանել «կամ բավարարում են սույն կանոնակարգի 19-րդ կետով սահմանված պահանջները» բառերը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հուլիսի 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
17 դեկտեմբերի 2015 թ., N 257-Ն

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. դեկտեմբերի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 19.01.2016 թ. (ՀՀԳՏ N3 (546), 1.02.2016):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 344-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին**

Նպատակ ունենալով ճշգրտել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող տեղեկատվության կազմը,

հիմք ընդունելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասը, 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 40-րդ հոդվածի 6-րդ մասը, 51-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերը, 85-րդ հոդվածը, 90-րդ հոդվածի 4-րդ մասը, 103-րդ հոդվածի 1-ին մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 30-ի «Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ը հաստատելու մասին» թիվ 344-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 3/01) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Կանոնակարգ 3/01-ի 27-րդ կետի 3-րդ ենթակետը, 36-րդ կետի 3-րդ ենթակետը, 93-րդ կետը, 97-րդ կետը, 109-րդ կետի 2-րդ ենթակետը, 110-րդ կետի 3-րդ ենթակետը, 222-րդ կետի 2-րդ ենթակետը ուժը կորցրած ճանաչել,
2) Կանոնակարգ 3/01-ի 27-րդ կետի 2-րդ ենթակետում և 36-րդ կետի 2-րդ ենթակետում «հաշվետվություն, կամ» բառերը փոխարինել «հաշվետվություն:» բառով,
3) Կանոնակարգ 3/01-ի Գլուխ 27-ի վերնագրում «ԱՆԴԱՄՆԵՐԻ» բառը փոխարինել «ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼԻ» բառերով,
4) Կանոնակարգ 3/01-ի Հավելված 38-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելված 1-ի (կցվում է):
5) Կանոնակարգ 3/01-ի Հավելված 39-ի Ենթահավելված 1-ի Աղյուսակ 3-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելված 2-ի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերի, որոնք ուժի մեջ են մտնում 2016 թվականի հուլիսի 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
17 դեկտեմբերի 2015 թ., N 258-Ն

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. դեկտեմբերի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 19.01.2016 թ. (ՀՀԳՏ N3 (546), 1.02.2016):

Հավելված 1

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2015 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 258-Ն որոշմամբ

Հավելված 38

«Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ի

ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՑԱՆԿ

Գիտելիքների և ունակությունների բնագավառները	Ապահովագրական ընկերության և օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի					Ապահովագրական բրոքերի		
	Խորհրդի անդամ, խորհրդի նախագահ, տնօրենի տեղակալ, գլխավոր հաշվապահ, ինչպես նաև վերոնշյալ պաշտոնները զբաղեցնելու համար հավակնող անձ	Ապահովագրական ընկերության կամ օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի վճռորոշ ազդեցություն ունեցող բաժնետեր կամ մասնակից, ինչպես նաև վերոնշյալ անձանց ղեկավար մարմինների անդամներ	Ապահովագրական ընկերության կամ օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի վճռորոշ ազդեցություն ունեցող բաժնետերերի կամ մասնակիցների ղեկավար մարմինների անդամներ	Ապահովագրական ընկերության կամ օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի վճռորոշ ազդեցություն ունեցող բաժնետերերի կամ մասնակիցների ղեկավար մարմինների անդամներ, որոնք ներկայացնում են վերջիններիս	Ապահովագրական ընկերության կամ օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի ղեկավար մարմինների անդամներ	Ապահովագրական բրոքերի տնօրեն, տնօրենի տեղակալ, գլխավոր հաշվապահ, ինչպես նաև վերոնշյալ պաշտոնները զբաղեցնելու համար հավակնող անձ	Ապահովագրական բրոքերի ղեկավար մարմինների անդամներ	Բրոքերի գործառութեր հանձնարարված այլ անձ
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*
1. Ապահովագրության օրենսդրություն, ենթաօրենսդրական դաշտ և ապահովագրության գործնական խնդիրներ								
1) Ապահովագրության հիմնական հասկացությունները	+	+	+	+	+	+	+	+
2) Ապահովագրության ձևերը, տեսակները և դասերը	+	+	+	+	+	+	+	+
3) Ապահովագրական ընկերությունների իրավական կարգավիճակը	+	+	+	+	+	-	-	-
4) Ապահովագրական ընկերության կապիտալում մասնակցության սահմանափակումները	+	+	+	+	+	+	-	-
5) Նշանակալից մասնակցությունը	+	+	+	+	+	+	-	-
6) Փոխկապակցված անձինք	+	+	+	+	+	+	-	-
7) Ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալին ներկայացվող պահանջները	+	+	+	+	+	-	-	-
8) Շահութաբաժինների վճարումը և վճարման սահմանափակումները	+	+	+	+	+	+	-	-
9) Նշանակալից մասնակցության ձեռքբերման նախնական համաձայնությունը	+	+	+	+	+	-	-	-
10) Ապահովագրական ընկերության կառավարման մարմինները և ղեկավարները	+	+	+	+	+	-	-	-
11) Ապահովագրական ընկերության ղեկավարների մասնագիտական համապատասխանությունն ու որակավորումը	+	+	+	+	+	-	-	-
12) Ապահովագրական ընկերության ղեկավարների նկատմամբ պահանջները	+	+	+	+	+	-	-	-
13) Ապահովագրական ընկերության ընդհանուր ժողովը և նրա իրավասությունները	+	+	+	+	+	-	-	-
14) Ապահովագրական ընկերության խորհուրդը, խորհրդի ձևավորումը, իրավասությունները	+	+	+	+	+	-	-	-
15) Ապահովագրական ընկերության գործադիր տնօրենը, տնօրենությունը	+	+	+	+	+	-	-	-
16) Ապահովագրական ընկերության գլխավոր հաշվապահը	+	+	+	+	+	-	-	-

17) Ապահովագրական ընկերության ներքին աուդիտը	+	+	+	+	+	-	-	-
18) Ապահովագրական ընկերության պատասխանատու ակտուարը	+	+	+	+	+	-	-	-
19) Ապահովագրական ընկերության արտաքին աուդիտը	+	+	+	+	+	-	-	-
20) Ապահովագրական գործունեության լիցենզավորումը	-	+	+	+	-	-	-	-
21) Ապահովագրական ընկերության գործարար ծրագիրը	+	+	+	+	+	-	-	-
22) Ապահովագրական ընկերության մասնաճյուղը և ներկայացուցչությունը	-	+	+	+	-	-	-	-
23) Օտարերկրյա ընկերության՝ Հայաստանի Հանրապետության տարածքում մասնաճյուղի և ներկայացուցչության գրանցումը	-	+	+	+	-	-	-	-
24) Ապահովագրական ընկերության՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս մասնաճյուղ և ներկայացուցչություն ստեղծելը	-	+	+	+	-	-	-	-
25) Օրենսդրությամբ սահմանված պահանջների փոփոխությունների գրանցումը	-	+	+	+	+	-	-	-
26) Ապահովագրական գործառույթների պատվիրակումը	-	+	+	+	+	-	-	-
27) Ապահովագրական ընկերության գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները	-	+	+	+	+	-	-	-
28) Ապահովագրական ընկերության տեխնիկական պահուստները	-	+	+	+	+	-	-	-
29) Վերաապահովագրությանն ու համատեղ ապահովագրությանը ներկայացվող պահանջները	-	+	+	-	+	+	-	+
30) Ապահովագրական ընկերության գործունեության նկատմամբ պահանջները	-	+	+	+	+	-	-	-
31) Ապահովագրական ընկերության ներդրումային գործունեությունը	-	+	+	+	+	-	-	-
32) Ապահովագրական ընկերության և հաճախորդների հարաբերությունները	-	+	+	+	+	-	-	-
33) Ապահովագրական ընկերության հետ կապված անձանց հետ գործարքները	-	+	+	+	+	-	-	-
34) Ապահովագրական ընկերության կողմից հրապարակվող տեղեկատվությունը, դրա հրապարակումը	-	+	+	+	+	-	-	-
35) Ապահովագրական ընկերության հաշվետվությունները	-	+	+	+	+	-	-	-
36) Ապահովագրական միջնորդությունը և դրա տեսակները	-	+	-	+	-	+	+	+
37) Ապահովագրական միջնորդների ռեգիստրը	-	+	-	+	-	+	+	+
38) Ապահովագրական բրոքերների պատասխանատու անձանց նկատմամբ պահանջները	-	-	-	-	-	+	+	+
39) Ապահովագրական միջնորդների ակտիվների առանձնացված հաշվառումը	-	-	-	-	-	+	+	-
40) Ապահովագրական պայմանագրերի կնքման միջնորդության նկատմամբ պահանջները	-	+	+	-	-	+	-	+
41) Ապահովագրական բրոքերների հաշ-վետվությունները, հրապարակվող տեղեկատվությունը և հաշվապահական հաշվառումը	-	-	-	-	-	+	+	+
42) Ապահովագրական բրոքերային գործունեության լիցենզավորումը	-	-	-	-	-	+	+	+
43) Ապահովագրական բրոքերի՝ Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում գործող մասնաճյուղը և ներկայացուցչությունը	-	-	-	-	-	+	+	+
44) Ապահովագրական գործակալի հաշվառումը	-	+	+	-	-	-	-	-
45) Ապահովագրական գործակալի՝ Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում գործող մասնաճյուղը և ներկայացուցչությունը	-	+	+	-	-	-	-	-
46) Ապահովագրական գաղտնիքը	-	+	+	+	+	+	+	+
47) Ապահովագրական պորտֆելի փոխանցումը	-	+	+	+	+	-	-	-
48) Ապահովագրական ընկերության վերակազմակերպումը և լուծարումը	-	+	+	-	-	+	-	-
49) Ապահովագրական ընկերության ինքնալուծարումը	-	+	+	-	-	-	-	-

50) Լուծարային հանձնաժողովի նկատմամբ վերահսկողությունը և հաշվետվությունները	+	+	+	-	-	+	-	-
51) Վերահսկողություն և պատասխանատվություն իրավական ակտերի խախտումների համար	+	+	+	+	+	+	+	+
52) Պատասխանատվության միջոցները	+	+	+	+	+	+	+	+
53) Ապահովագրական ընկերության ակտիվների դասակարգումը և հնարավոր կորուստների պահուստների ձևավորումը	-	+	+	+	+	-	-	-
54) Ապահովագրական ընկերության ներքին աուդիտի գործունեության, ներքին հսկողության համակարգին ներկայացվող նվազագույն պահանջները	+	+	+	+	+	-	-	-
55) Ապահովագրության տարրերը	-	+	+	+	+	+	+	+
56) Ապահովագրողները	-	+	+	+	+	+	+	+
57) Ապահովագրության պայմանագիրը	-	+	+	+	+	+	+	+
58) Ապահովագրության պայմանագիրը կնքելիս ապահովադրի կողմից տրամադրվող տեղեկությունները	-	+	+	-	+	+	-	+
59) Ապահովագրական պատահարը	-	+	+	-	+	+	-	+
60) Ապահովագրական ռիսկի գնահատումը	-	+	+	-	+	+	-	+
61) Ապահովագրական գումար և ապահովագրական արժեք	-	+	+	+	+	+	+	+
62) Ապահովագրական հատուցման նվազեցումը և հատուցման մերժման հիմքերը	-	+	+	-	+	+	-	+
63) Համատեղ ապահովագրությունը	-	+	+	+	+	+	-	+
64) Ապահովագրավճարը	-	+	+	+	+	+	+	+
65) Ապահովագրված անձին փոխարինելը	-	+	-	-	+	+	-	+
66) Շահառուն	-	+	+	+	+	+	+	+
67) Ապահովագրության պայմանագրի գործողության սկիզբը	-	+	+	+	+	+	+	+
68) Ապահովագրության պայմանագրի վաղաժամկետ դադարումը և դրա իրավական հետևանքները	-	+	+	-	+	+	-	+
69) Ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում ապահովագրական ռիսկի մեծանալու կամ նվազելու հետևանքները	-	+	+	+	+	+	+	+
70) Ապահովագրության օբյեկտի նկատմամբ իրավունքներն այլ անձի փոխանցելը	-	+	+	-	+	+	-	+
71) Ապահովագրական պատահարը տեղի ունենալու մասին ապահովագրողին ծանուցելը	-	+	+	-	+	+	-	+
72) Ապահովագրական պատահարից առաջացած վնասները նվազեցնելը	-	+	+	-	+	+	+	+
73) Ապահովադրի, ապահովագրված անձի կամ շահառուի մեղքով ապահովագրական պատահարի տեղի ունենալու հետևանքները	-	+	+	-	+	+	-	+
74) Ապահովագրական հատուցումը և ապահովագրական գումար վճարելուց ապահովագրողին ազատելը	-	+	+	-	+	+	-	+
75) Վնասի հատուցման պահանջի իրավունքը ապահովադրից ապահովագրողին անցնելը	-	+	+	-	+	+	-	+
76) Հայցային վաղեմությունը ապահովագրության հետ կապված պահանջներով	-	+	+	-	+	+	-	+
77) Վերաապահովագրության պայմանագիրը	-	+	+	+	+	+	+	+
78) Պարտադիր ապահովագրությունը	-	+	+	+	+	+	+	+
79) Երրորդ անձի կողմից վնաս պատճառելու համար պատասխանատվության ապահովագրությունը	-	+	+	-	+	+	-	+
79.1) Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրությունը	-	+	+	-	-	+	-	+
80) Գործնական ապահովագրության խնդիրներ	-	+	+	+	-	+	+	+
2. Ապահովագրություն և ակտուարական հաշվարկներ								
1) Ֆինանսական մաթեմատիկա և ներդրումներ								
ա. Ներդրումային պայուսակներ, դրանց եկամտաբերության ու ռիսկայնության գնահատումներ	-	-	-	-	+	-	-	-
բ. Կապիտալ ակտիվների գնահատման մոդել (CAPM)	-	-	-	-	+	-	-	-
գ. Ներդրումային նախագծերի գնահատում	-	-	-	-	+	-	-	-
դ. Անուիտետներ, դրանց տեսակները	-	-	-	-	+	-	-	-
ե. Փողի ժամանակային արժեք, դրամական հոսքերի ներկա և ապագա արժեքներ	-	-	-	-	+	-	-	-

գ. Եկամտաբերության ներքին դրույք (IRR)	-	-	-	-	+	-	-	-
է. Արժեթղթերի (պարտատոմսեր, բաժնետոմսեր, ածանցյալ գործիքներ) գնահատում և գնորոշում	-	-	-	-	+	-	-	-
ը. Տարբեր պարբերականությամբ հաշվարկվող անվանական, իրական և արդյունավետ տոկոսադրույքներ	-	-	-	-	+	-	-	-
թ. Շարունակաբար (անընդհատ) հաշվարկվող տոկոսադրույք, տոկոսադրույքի ուժ	-	-	-	-	+	-	-	-
ժ. Տարբեր պարբերականությամբ հաշվարկվող անվանական, իրական և արդյունավետ դիսկոնտի (զեղչման) դրույքներ	-	-	-	-	+	-	-	-
ժա. Միջազգայնորեն ընդունված պայմանական նշանակումներ (անուիտետի, զեղչման գործակիցների, տարբեր վճարման հաճախականությամբ տոկոսադրույքների և այլն)	-	-	-	-	+	-	-	-
2) Կյանքի ապահովագրության մաթեմատիկա								
ա. Կյանքի ապահովագրության պրոդուկտներ (անուիտետներ, մահվան, լրակեցության, խառը ապահովագրություն և այլն), դրանց հետ կապված ֆինանսական հոսքերի գնահատում	-	-	-	-	+	-	-	-
բ. Կյանքի ապահովագրության վկայագրերի/պոլիսների, դրանց գծով ապահովագրավճարների և հատուցումների (օգուտների) ներկա և ապագա արժեքները	-	-	-	-	+	-	-	-
գ. Զուտ ապահովագրավճարով վկայագրի արժեքը (net premium policy value)	-	-	-	-	+	-	-	-
դ. Միջազգայնորեն ընդունված ակտուարական պայմանական նշանակումների համակարգ	-	-	-	-	+	-	-	-
ե. Կոմուտացիոն ֆունկցիաներ	-	-	-	-	+	-	-	-
3) Ոչ կյանքի ապահովագրության մաթեմատիկա								
ա. Ոչ կյանքի ապահովագրության դասերը, դրանց առանձնահատկությունները, համապահովագրություն	-	-	-	-	+	-	-	-
բ. Ապահովագրողի սեփական պահում և վերապահովագրություն, վերապահովագրության տեսակները	-	-	-	-	+	-	-	-
գ. Չհատուցվող գումար՝ ֆրանշիզա	-	-	-	-	+	-	-	-
դ. Ապահովագրավճարների հաշվարկման մեթոդաբանությունը և հաշվառման սկզբունքները	-	-	-	-	+	-	-	-
ե. Ապահովագրական պատահարները նկարագրող վիճակագրական բաշխումներ, դրանց հատկությունները	-	-	-	-	+	-	-	-
զ. Առանձին ապահովագրական պատահարի գծով վնասի չափը նկարագրող վիճակագրական բաշխումներ, դրանց հատկությունները	-	-	-	-	+	-	-	-
է. Ապահովագրական պորտֆելի գծով ընդհանուր վնասները նկարագրող վիճակագրական բաշխումներ, դրանց հատկությունները	-	-	-	-	+	-	-	-
ը. Վնասաբերության ցուցանիշը	-	-	-	-	+	-	-	-
թ. Սպասվող հատուցման գումարների և ապահովագրավճարների հաշվարկման համար վստահության տեսություն ու վստահության գործակիցներ (այդ թվում՝ քառակուսի արմատի կանոնով հաշվարկված)	-	-	-	-	+	-	-	-
ժ. Օգտակարության տեսություն	-	-	-	-	+	-	-	-
ժա. «Բոնուս-մալուս» կամ NCD համակարգեր	-	-	-	-	+	-	-	-
ժբ. Ոչ կյանքի ապահովագրության համար ձևավորվող պահուստներ	-	-	-	-	+	-	-	-
4) Հավանականություններ և մաթեմատիկական վիճակագրություն								
ա. Հավանականությունների բազմապատկման և գումարման կանոնները	-	-	-	-	+	-	-	-
բ. Պատահական մեծությունների թվային բնութագրիչները և դրանց հաշվարկման առանձնահատկությունները (մաթեմատիկական սպասում, դիսպերսիա, միջին քառակուսային շեղում/ ստանդարտ շեղում, կովարիացիա, կոռելյացիա)	-	-	-	-	+	-	-	-

գ. Նորմալ բաշխումը և դրա հատկությունները (կետի տվյալ միջակայք ընկնելու հավանականության հաշվարկը, երեք սիգմայի կանոնը): Ստանդարտացված պատահական մեծությունը և դրա վիճակագրական բնութագրիչները	-	-	-	-	+	-	-	-
դ. Կոռելյացիոն և ռեգրեսիոն վերլուծության հիմունքները (երկակի և բազմակի ռեգրեսիաների պարամետրերի գնահատման եղանակները, նվազագույն քառակուսիների եղանակը, t-չափանիշը և դրա հաշվարկը)	-	-	-	-	+	-	-	-
ե. Նորմալ բաշխման պարամետրերի միջակայքերի գնահատման եղանակները (մաթեմատիկական սպասման և դիսպերսիայի միջակայքերի գնահատումը)	-	-	-	-	+	-	-	-
զ. Ընտրանքի անհրաժեշտ չափը որոշելու սկզբունքները և բանաձևերը	-	-	-	-	+	-	-	-
է. Ավտոռեգրեսիա (AR) և սահող միջին (MA) ժամանակային շարքերի առաջին և երկրորդ կարգի մոմենտները (մաթեմատիկական սպասումը և դիսպերսիան)	-	-	-	-	+	-	-	-
ը. Մարկովյան շղթաներ (անցումային հավանականությունների հաշվարկը n քայլի համար): Մարկովյան շղթայի ստացիոնար անցումային հավանականությունների հաշվարկը	-	-	-	-	+	-	-	-
5) Գործնական խնդիրներ	-	-	-	-	+	-	-	-
3. Ընդհանուր տնտեսական օրենսդրություն և քաղաքացիաիրավական հարաբերություններ								
1) Քաղաքացիական իրավունքների սուբյեկտներ	-	+	+	+	+	+	+	+
2) Պայմանագրից ծագող պարտավորություններ		+	+	+	+	+	+	+
3) Ընդհանուր դրույթներ պարտավորությունների մասին	-	+	+	+	+	+	+	+
4) Գործարքներ: Ներկայացուցչություն: Ժամկետներ: Հայցային վաղեմություն	-	+	+	+	+	+	+	+
5) ՀՀ կենտրոնական բանկի հիմնական խնդիրը և այլ խնդիրներ	+	+	+	+	+	+	+	+
6) ՀՀ կենտրոնական բանկի կողմից իրականացվող ստուգումները և վերահսկողությունը	+	+	+	+	+	+	+	+
7) Բաժնետիրական ընկերության իրավական վիճակը	-	+	+	+	-	+	+	+
8) Բաժնետիրական ընկերության և այլ անձանց պատասխանատվությունը	+	+	+	+	-	+	+	+
9) Բաժնետիրական ընկերության անվանումը և գտնվելու վայրը	-	+	+	+	-	+	+	+
10) Բաժնետիրական ընկերության մասնաճյուղերը և ներկայացուցչությունները	-	+	+	+	-	+	+	+
11) Բաժնետիրական ընկերությունների տեսակները	-	+	+	+	-	+	+	+
12) Բաժնետիրական ընկերության ստեղծումը, վերակազմակերպումը և լուծարումը	-	+	+	+	-	+	+	+
13) Բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը, ընկերության բաժնետոմսերը և այլ արժեթղթերը, ընկերության զուտ ակտիվները	-	+	+	+	-	+	+	+
14) Բաժնետիրական ընկերության բաժնետերերի ռեեստրը	-	+	+	+	-	+	+	+
15) Բաժնետիրական ընկերության ընդհանուր ժողովը	+	+	+	+	-	+	+	+
16) Բաժնետիրական ընկերության խորհուրդը և գործադիր մարմինը	+	+	+	+	-	+	+	+
17) Բաժնետիրական ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումը	+	+	+	+	-	+	+	+
18) Հաշվառումը և հաշվետվությունները, բաժնետիրական ընկերության մասին տեղեկությունները	-	+	+	+	-	+	+	+
19) Հիմնական դրույթներ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների վերաբերյալ	-	+	+	+	-	+	+	+
20) Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սեփականությունը	+	+	+	+	-	+	+	+
21) Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և նրա մասնակիցների պատասխանատվությունը	+	+	+	+	-	+	+	+

22) Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնաճյուղերը և ներկայացուցչությունները	-	+	+	+	-	+	+	+
23) Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ստեղծումը	-	+	+	+	-	+	+	+
24) Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցները	+	+	+	+	-	+	+	+
25) Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալը	+	+	+	+	-	+	+	+
26) Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կառավարումը	+	+	+	+	-	+	+	+
27) Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վերակազմակերպումը և լուծարումը	-	+	+	+	-	+	+	+
4. Հաշվապահական հաշվառման օրենսդրություն, հաշվապահական ստանդարտներ, հարկային օրենսդրություն								
1) Ֆինանսական հաշվետվությունները և դրանց տարրերը	-	+	+	+	+	+	+	-
2) Ֆինանսական հաշվետվությունների տարրերի ճանաչումը և չափումը	-	+	+	+	+	+	+	-
3) Հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու սկզբունքները	-	+	+	+	+	+	+	-
4) Կազմակերպության ղեկավարի իրավունքները և պարտականությունները հաշվապահական հաշվառման կազմակերպման գործում	-	+	+	+	-	+	+	-
5) Գլխավոր հաշվապահի իրավունքները և պարտականությունները	-	+	+	+	-	+	+	-
6) Հաշվապահական հաշվառման վարման հիմնական կանոնները	-	+	+	+	+	+	+	-
7) Սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերը	-	+	+	+	+	+	+	-
8) Հաշվապահական հաշվառման գրանցամատյանները	-	+	+	+	-	+	+	-
9) Ստորագրության իրավունքը հաշվապահական հաշվառման փաստաթղթերում	-	+	+	+	-	+	+	-
10) Ակտիվների և պարտավորությունների գույքագրումը	-	+	+	+	-	+	+	-
11) Հաշվապահական տեղեկատվության գաղտնիությունը	-	+	+	+	+	+	+	-
12) Հաշվապահական հաշվառման փաստաթղթերի պահպանումը	-	+	+	+	-	+	+	-
13) Ֆինանսական հաշվետվություններ կազմելը և ներկայացնելը	-	+	+	+	-	+	+	-
14) Ապահովագրական ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման հաշվային պլանը, դրա կիրառման մասին հրահանգը	-	-	+	+	-	-	-	-
15) «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ՀՀՄՍ 1	-	-	+	+	-	-	+	-
16) «Պաշարներ» ՀՀՄՍ 2	-	-	+	+	-	-	+	-
17) «Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն» ՀՀՄՍ 7	-	-	+	+	-	-	+	-
18) «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխություններ և սխալներ» ՀՀՄՍ 8	-	-	+	+	-	-	+	-
19) «Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր» ՀՀՄՍ 10	-	-	+	+	-	-	+	-
20) «Շահութահարկ» ՀՀՄՍ 12	-	-	+	+	-	-	+	-
21) «Հիմնական միջոցներ» ՀՀՄՍ 16	-	-	+	+	-	-	+	-
22) «Վարձակալություն» ՀՀՄՍ 17	-	-	+	+	-	-	+	-
23) «Հասույթ» ՀՀՄՍ 18	-	-	+	+	-	-	+	-
24) «Պետական շնորհների հաշվառում և պետական օգնության բացահայտում» ՀՀՄՍ 20	-	-	+	+	-	-	+	-
25) «Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքները» ՀՀՄՍ 21	-	-	+	+	-	-	+	-

26) «Ֆինանսական գործիքներ. ներկայացումը» ՀՀՄՍ 32	-	-	+	+	-	-	+	-
27) «Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ» ՀՀՄՍ 34	-	-	+	+	-	-	+	-
28) «Ակտիվների արժեզրկում» ՀՀՄՍ 36	-	-	+	+	-	-	+	-
29) «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ» ՀՀՄՍ 37	-	-	+	+	-	-	+	-
30) «Ոչ նյութական ակտիվներ» ՀՀՄՍ 38	-	-	+	+	-	-	+	-
31) «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39	-	-	+	+	-	-	+	-
32) «Ներդրումային գույք» ՀՀՄՍ 40	-	-	+	+	-	-	+	-
33) «Ապահովագրության պայմանագրեր» ՖՀՄՍ 4	-	-	+	+	-	-	+	-
34) «Ֆինանսական գործիքներ. բացահայտումներ» ՖՀՄՍ 7	-	-	+	+	-	-	+	-
35) Հարկերի և հարկային արտոնությունների տեսակները	-	+	+	+	-	+	+	+
36) Հարկ վճարողների իրավունքները, պարտականությունները և հսկողությունը հարկերի վճարման նկատմամբ	-	+	+	+	-	+	+	+
37) Հարկային պարտավորություններից ավելի բյուջե վճարված գումարները հարկ վճարողին վերադարձնելու կարգը	-	+	+	+	-	+	+	+
38) Հարկվող սուբյեկտները և հարկվող օբյեկտը	-	-	+	+	-	-	+	-
39) Համախառն եկամուտը	-	-	+	+	-	-	+	-
40) Համախառն եկամտի նվազեցումները	-	-	+	+	-	-	+	-
41) Ոչ ռեզիդենտի հարկումը	-	-	+	+	-	-	+	-
5. Այլ								
1) Ֆինանսական համակարգի հաշտարարը	+	+	+	-	-	+	-	+
2) Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքար	+	+	+	+	+	+	+	+

Հավելված 2
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2015 թվականի դեկտեմբերի 15 -ի թիվ 258-Ն որոշմամբ

Հավելված 39

«Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ի
ԵՆԹահավելված 1
«Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ի հավելված 39-ի

ԱՂՅՈՒՍԱԿ 3

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻՆ ՀԱՄԱՐԺԵՔ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ

(հազար դրամ)

Տեխնիկական պահուստներին համարժեք ակտիվներ	Փաստացի մեծությունը նախորդ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ	1-ին պլանավորվող տարվա հուլիսի 1	2-րդ պլանավորվող տարվա հունվարի 1	2-րդ պլանավորվող տարվա հուլիսի 1	3-րդ պլանավորվող տարվա հունվարի 1	3-րդ պլանավորվող տարվա հուլիսի 1	4-րդ պլանավորվող տարվա հունվարի 1
	1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*
1. Կանխիկ դրամական միջոցներ							
2. ՀՀ պետական արժեթղթեր							
3. ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր							
4. Ստանդարտ և Փուրզ/Ֆիտչ վարկանշային կազմակերպությունների կողմից «A+» և բարձր կամ Մուդիզ վարկանշային կազմակերպության կողմից «A1» և բարձր կամ Ա.Մ. Բեստ վարկանշային կազմակերպության կողմից «A» և բարձր վարկանիշ ունեցող պետությունների պետական գանձապետական պարտատոմսեր							
5. Բանկային հաշիվներ (այդ թվում՝ անկանխիկ ոսկով) ՀՀ տարածքում գործող բանկերում և օտարերկրյա բանկերի՝ ՀՀ-ում գործող մասնաճյուղերում							
6. Ցպահանջ և ժամկետային ավանդներ ՀՀ տարածքում գործող բանկերում և օտարերկրյա բանկերի՝ ՀՀ-ում գործող մասնաճյուղերում							
7. Ստանդարտ և Փուրզ/Ֆիտչ վարկանշային կազմակերպությունների կողմից «A+» և բարձր կամ Մուդիզ վարկանշային կազմակերպության կողմից «A1» և բարձր կամ Ա.Մ. Բեստ վարկանշային կազմակերպության կողմից «A» բարձր վարկանիշ ունեցող օտարերկրյա բանկերում բանկային հաշիվներ, ցպահանջ և ժամկետային ավանդներ							
8. Ստանդարտ և Փուրզ/Ֆիտչ վարկանշային կազմակերպությունների կողմից «A+» և բարձր կամ Մուդիզ վարկանշային կազմակերպության կողմից «A1» և բարձր կամ Ա.Մ. Բեստ վարկանշային կազմակերպության կողմից «A» և բարձր վարկանիշ ունեցող կորպորատիվ արժեթղթեր							
9. Տեխնիկական պահուստներին համարժեք այլ ակտիվներ							

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 116-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին**

Նպատակ ունենալով ճշգրտել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող տեղեկատվության կազմը,

հիմք ընդունելով «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 54-րդ հոդվածի 2-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի ««Ներդրումային ֆոնդի կառավարիչների և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի, ինչպես նաև ներդրումային ֆոնդի կառավարչի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների վերագրանցումը և վերալիցենզավորումը՝ որպես ներդրումային ֆոնդի կառավարիչ, ներդրումային ֆոնդի կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելը, ներդրումային ֆոնդի կառավարիչների, դրանց մասնաճյուղերի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի կողմից գործարար ծրագրի, դրա փոփոխությունների և դրա իրականացման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 10/01-ը հաստատելու մասին» թիվ 116-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ֆոնդի կառավարիչների և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի, ինչպես նաև ներդրումային ֆոնդի կառավարչի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների վերագրանցումը և վերալիցենզավորումը՝ որպես ներդրումային ֆոնդի կառավարիչ, ներդրումային ֆոնդի կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելը, ներդրումային ֆոնդի կառավարիչների, դրանց մասնաճյուղերի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի կողմից գործարար ծրագրի, դրա փոփոխությունների և դրա իրականացման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 10/01-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Կանոնակարգի 28-րդ կետի 3-րդ ենթակետը և 57-րդ կետի 3-րդ ենթակետը ուժը կորցրած ճանաչել:

2) Կանոնակարգի 56-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«56. Սույն կանոնակարգի 53-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները) Կենտրոնական բանկ չեն ներկայացվում, եթե կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական անձը հանդիսանում է Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձ, որը օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված պարբերականությամբ և կարգով Կենտրոնական բանկ է ներկայացնում հաշվապահական հաշվեկշիռը, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հուլիսի 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
17 դեկտեմբերի 2015 թ., N 259-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. դեկտեմբերի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 19.01.2016 թ. (ՀՀԳՏ N3 (546), 1.02.2016):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 17-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով ճշգրտել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող տեղեկատվության կազմը,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 54-րդ հոդվածի 6-րդ մասը, 82-րդ հոդվածը, 104-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 141-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի ««Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/01-ը հաստատելու մասին» թիվ 17-Ն որոշմամբ հաստատված «Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/01-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Կանոնակարգի 36-րդ և 40-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել:

2) Կանոնակարգի 53-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«53. Սույն կանոնակարգի 51-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները) Կենտրոնական բանկ չեն ներկայացվում, եթե օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական անձը հանդիսանում է Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձ, որը օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված պարբերականությամբ և կարգով Կենտրոնական բանկ է ներկայացնում հաշվապահական հաշվեկշիռը և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հուլիսի 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
17 դեկտեմբերի 2015 թ., N 260-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. դեկտեմբերի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 19.01.2016 թ. (ՀՀՊՏ N3 (546), 1.02.2016):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 16-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով ճշգրտել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող տեղեկատվության կազմը,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասը, 43-րդ հոդվածի 2-րդ մասը և 54-րդ հոդվածի 6-րդ մասը, 82-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի ««Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ներդրումային ընկերությունների կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի, վարկային կազմակերպության կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» կանոնակարգ 4/01-ը հաստատելու մասին» թիվ 16-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, նրանց կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» կանոնակարգ 4/01-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Կանոնակարգի 28-րդ կետի 3-րդ ենթակետը, 37-րդ կետի 3-րդ ենթակետը, 91-րդ կետը, 95-րդ կետը, 109-րդ կետի 3-րդ ենթակետը ուժը կորցրած ճանաչել:

2) Կանոնակարգի 108-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«108. Սույն կանոնակարգի 105-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները) Կենտրոնական բանկ չեն ներկայացվում, եթե ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական անձը հանդիսանում է Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձ, որը օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված պարբերականությամբ և կարգով Կենտրոնական բանկ է ներկայացնում ֆինանսական վիճակի մասին և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունները:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հուլիսի 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
17 դեկտեմբերի 2015 թ., N 261-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. դեկտեմբերի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 19.01.2016 թ. (ՀՀԳՏ N3 (546), 1.02.2016):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 14-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով ճշգրտել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող տեղեկատվության կազմը,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 54-րդ հոդվածի 6-րդ մասը, 82-րդ հոդվածը, 182-րդ հոդվածը, 184-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի ««Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցումն ու լիցենզավորումը, կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/02-ը հաստատելու մասին» թիվ 14-Ն որոշմամբ հաստատված «Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցումն ու լիցենզավորումը, կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/02-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Կանոնակարգի 36-րդ և 40-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել,

2) Կանոնակարգի 53-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«53. Սույն կանոնակարգի 51-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները) Կենտրոնական բանկ չեն ներկայացվում, եթե Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական անձը հանդիսանում է Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձ, որը օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված պարբերականությամբ և կարգով Կենտրոնական բանկ է ներկայացնում հաշվապահական հաշվեկշիռը և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հուլիսի 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
17 դեկտեմբերի 2015 թ., N 262-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. դեկտեմբերի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 19.01.2016 թ. (ՀՀԳՏ N3 (546), 1.02.2016):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով հստակեցնել բանկերի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների լրացման կարգը,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ հոդվածը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը և 70-րդ հոդվածի 1-ին մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» և «իա» կետերով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի ««Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ը հաստատելու մասին» թիվ 50-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 3) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) Կանոնակարգ 3-ի 7-րդ կետում՝
   ա. երկրորդ պարբերությունում «17-րդ,» բառից հետո լրացնել «17.1-ից 17.4-րդ,» բառերով,
   բ. երկրորդ պարբերությունում «24.1.4» թվից հետո լրացնել «, 24.1.5» թիվը,
   գ. երրորդ պարբերությունում «24.1.4» թիվը փոխարինել «24.1.5» թվով:
2) Կանոնակարգ 3-ի 25-րդ կետի 8-րդ ենթակետում.
   ա. 8-րդ պարբերությունում «արտերկրից» բառից հետո լրացնել «դեպի» բառը,
   բ. 9-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
   «ա. եթե ֆիզիկական անձի կողմից ստացված փոխանցման վճարողը իրավաբանական անձ է, ապա նշված միջոցը պետք է դասակարգել որպես «առևտրային»»,
   գ. 10-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
   «բ. եթե ֆիզիկական անձի կողմից ստացված փոխանցման վճարողը ֆիզիկական անձ է, ապա այն պետք է դիտարկել որպես ոչ առևտրային նպատակով իրականացված ստացում և ընդգրկել «ոչ առևտրային» սյունակում միայն այն դեպքում, եթե փոխանցվող գումարի չափը չի գերազանցում 10000 ԱՄՆ դոլարը կամ դրան համարժեք գումարը ներառյալ»,
   դ. 10-րդ պարբերությունից հետո լրացնել նոր պարբերություն՝ հետևյալ բովանդակությամբ.
   «գ. եթե ֆիզիկական անձի կողմից ստացված փոխանցումները իրականացվել են դրամական փոխանցումների իրականացման միջազգային համակարգերով, ապա ստացումը դասակարգվում է որպես «ոչ առևտրային» (անկախ գումարի չափից), եթե բանկը չունի այլ տվյալներ, որը հանգեցնում է փոխանցումը դասակարգել որպես «առևտրային»:
3) Կանոնակարգ 3-ի ՁԼ թիվ 4 հաշվետվության 1-ին էջում 17-րդ սյունակից հետո լրացնել հետևյալ սյունակները.

Ամբողջական դրույքաչափի մեկ ութերորդի չափով պահուստավորման ենթակա ներգրավված միջոցներ			
ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ արտարժույթ
17.1	17.2	17.3	17.4

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
17 դեկտեմբերի 2015 թ., N 263-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. դեկտեմբերի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 19.01.2016 թ. (ՀՀԳՏ N3 (546), 1.02.2016):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մարտի 3-ի թիվ 93-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով հստակեցնել վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների լրացման կարգը,

հիմք ընդունելով «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը և 70-րդ հոդվածի 1-ին մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» և «իա» կետերով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մարտի 3-ի ««Վարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 15-ը նոր խմբագրությամբ հաստատելու մասին» թիվ 93-Ն որոշմամբ հաստատված «Վարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 15-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 15) կատարել հետևյալ լրացումներն ու փոփոխությունները.

1) Կանոնակարգ 15-ի 16-րդ կետում.

ա. 1-ին ենթակետում «իրականացված բոլոր գործառնությունները» բառերը փոխարինել «ֆինանսական բոլոր փոխհարաբերությունները» բառերով,

բ. 2-րդ ենթակետից հետո լրացնել նոր՝ 2.1 ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Հաշվետվության մեջ լրացվող արտարժույթով արտահայտված բոլոր գումարները (բացառությամբ՝ I աղյուսակի «Կապիտալի արժեթղթեր» բաժնի «Պասիվ» մասում լրացվող տվյալների) վերածվում են դրամի՝ հաշվետու եռամսյակի վերջին օրվա դրությամբ համապատասխան արժույթի գործող հաշվարկային փոխարժեքով կամ հաշվարկային փոխարժեքի միջոցով հաշվարկված քրոս-կուրսով:»,

գ. 4-րդ ենթակետը ուժը կորցրած ճանաչել,

դ. 6-րդ ենթակետում «(մայր գումարների)» բառերից հետո լրացնել «և դրանց հետ կապված ստացվելիք անվանական տոկոսների հաշվեկշռային» բառերը,

ե. 8-րդ ենթակետում «Տվյալները լրացվում են աճողական կարգով՝ տարեսկզբից մինչև հաշվետու եռամսյակի վերջին օրվա դրությամբ հաշվեգրված տոկոսները» բառերից հետո լրացնել «՝ անկախ այն բանից, թե պարտքային գործիքը, վարկը կամ ավանդը գործում է, թե՝ ոչ հաշվետու եռամսյակի վերջին օրվա դրությամբ» բառերը,

զ. 10-րդ ենթակետից հանել «՝ թողնելով նախորդ ժամանակաշրջանի համապատասխան տողերը դատարկ» բառերը,

է. 19-րդ ենթակետում.

է1. «ածանցյալ գործիքների» բառերից հետո լրացնել «զուտ» բառը,

է2. «նվազումը» բառը փոխարինել «բացասական մնացորդն» բառերով,

է3. «աճը» բառը փոխարինել «դրական մնացորդը» բառերով,

ը. 20-րդ ենթակետի առաջին նախադասությունից հանել «տվյալներ» բառը,

թ. 22-րդ ենթակետը վերջից լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ընդ որում՝ լրացվում է պահանջների և պարտավորությունների միայն ժամկետանց մասը:»,

ժ. 26-րդ ենթակետում ««Պասիվ» մասի վերաբերյալ» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև «Ավանդներ/փոխառություններ» բաժնում արտացոլված փոխառությունների վերաբերյալ» բառերը,

ժա. 27-րդ ենթակետում «գրանցման երկիրը» բառերը փոխարինել «գրանցման երկրի Ստանդարտների միջազգային կազմակերպության կոդը (ISO կոդը)» բառերով,

ժբ. 28-րդ ենթակետի ե ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ե. S-ն ներառում է ֆիզիկական անձանց և տնային տնտեսությունները:»,

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. դեկտեմբերի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 25.01.2016 թ. (ՀՀԳՏ N3 (546), 1.02.2016):

ժգ. 28-րդ ենթակետի ե ենթակետից հետո լրացնել նոր՝ զ ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«զ. Եթե Ֆ-ն, Մ-ն, Պ-ն, Ի-ն կամ Տ-ն տվյալ վարկային կազմակերպության համար հանդիսանում են ուղղակի ներդրող կամ նույն խմբի մեջ մտնող սուբյեկտ (ուղղակի ներդրողի և նույն խմբի մեջ մտնող սուբյեկտների մանրամասն սահմանումները Հավելված 18.1-ում), ապա համապատասխան տառերը գրվում են շտրիխներով (Ֆ՛, Մ՛, Պ՛, Ի՛ կամ Տ՛):»,

ժդ. 29-րդ ենթակետում «օվերդրաֆտ» բառից հետո լրացնել «, փոխառություն» բառը,

ժե. 38-րդ ենթակետը վերջից լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ընդ որում՝ տոկոսագումարներն արտացոլվում են համախառն հիմքով՝ առանց շահութահարկի զտման:»,

ժզ. 41-րդ ենթակետը վերջից լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Բոլոր բաժինները լրացվում են համապատասխան ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ անվանական գումարների (մայր գումարների) և դրանց հետ կապված ստացվելիք անվանական տոկոսների հաշվեկշռային մնացորդների հիման վրա:»,

ժէ. 45-րդ ենթակետից հանել «(չի վերաբերում հաշվեգրված տոկոսներին, որոնք ներառվում են յուրաքանչյուր գործիքի հետ մեկտեղ)» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
21 դեկտեմբերի 2015 թ., N 264-Ն

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի օգոստոսի 26-ի թիվ 261-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին**

Նպատակ ունենալով բանկերի կողմից վարվող ավանդների և ավանդատուների վերաբերյալ տեղեկատվական էլեկտրոնային համակարգում ներառվող տեղեկությունները համապատասխանեցնել օրենսդրական փոփոխություններին,

հիմք ընդունելով «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի օգոստոսի 26-ի «Բանկերի կողմից ավանդների և ավանդատուների վերաբերյալ տեղեկատվական էլեկտրոնային համակարգի վարման, տվյալների պահպանման, երաշխավորված ավանդների հատուցման ենթակա գումարների հաշվարկման և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 261-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի կողմից ավանդների և ավանդատուների վերաբերյալ տեղեկատվական էլեկտրոնային համակարգի վարման, տվյալների պահպանման, երաշխավորված ավանդների հատուցման ենթակա գումարների հաշվարկման և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին տրամադրման վերաբերյալ» կարգում (այսուհետ՝ Կարգ) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Կարգի 2.3 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Բանկերն ավանդների և ավանդատուների վերաբերյալ տեղեկատվական էլեկտրոնային համակարգը վարում և տվյալները պահպանում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) խորհրդի 2013 թվականի հուլիսի 9-ի թիվ 173-Ն որոշմամբ հաստատված «Տեղեկատվական անվտանգության ապահովման նվազագույն պահանջների սահմանման վերաբերյալ» կարգին (այսուհետ՝ Տեղեկատվական անվտանգության ապահովման նվազագույն պահանջներ) համապատասխան»,

2) Կարգի 2.4.-րդ կետի ««Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանների» բառերը փոխարինել «Տեղեկատվական անվտանգության ապահովման նվազագույն պահանջների» բառերով,

3) Կարգի հավելված 2-ում բոլոր «չորս միլիոն» բառերը փոխարինել «տասը միլիոն» բառերով, իսկ բոլոր «երկու միլիոն» բառերը փոխարինել «հինգ միլիոն» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
17 դեկտեմբերի 2015 թ., N 265-Ն

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. դեկտեմբերի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 19.01.2016 թ. (ՀՀԳՏ N3 (546), 1.02.2016):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի փետրվարի 16-ի թիվ 68-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով բանկերի կողմից երաշխիքային վճարների հաշվարկման կարգը համապատասխանեցնել օրենսդրական փոփոխություններին,

հիմք ընդունելով «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի փետրվարի 16-ի «Երաշխիքային վճարները հաշվարկելու և բանկերի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին երաշխիքային վճարները հաշվարկելու, ավանդատուների թվի և հատուցման ենթակա գումարի վերաբերյալ հաշվետվության ներկայացման կարգը հաստատելու մասին» թիվ 68-Ն որոշմամբ հաստատված «Երաշխիքային վճարները հաշվարկելու և բանկերի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին երաշխիքային վճարները հաշվարկելու, ավանդատուների թվի և հատուցման ենթակա գումարի վերաբերյալ հաշվետվության ներկայացման» կարգում կատարել հետևյալ լրացումներն ու փոփոխությունները.

1) Կարգի 3.2.11 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3.2.11. «9»-րդ սյունակի համապատասխան տողերում լրացվում են տվյալներ այն ավանդատուների և իրենց ավանդների վերաբերյալ, որոնք ունեն դրամային և արտարժութային ավանդ, և որոնց դրամային ավանդը պակաս է Օրենքով սահմանված արտարժութային ավանդի երաշխավորված առավելագույն չափից, և արտարժութային ավանդը չի գերազանցում Օրենքով սահմանված արտարժութային ավանդի երաշխավորված առավելագույն չափի և դրամային ավանդի դրական տարբերությունը:»,

2) Կարգի 3.2.11 կետից հետո լրացնել նոր 3.2.12 կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«3.2.12. «10»-րդ սյունակի համապատասխան տողերում լրացվում են նախորդ սյունակների համապատասխան տողերում նշված թվերի հանրագումարները՝ բացառությամբ 4-րդ տողի և 9-րդ սյունակի համապատասխան տողերի: Ընդ որում՝ 4-րդ տողը լրացվում է սույն կարգի 3.2.3.1-րդ կետի համաձայն:»,

3) Կարգի Գլուխ 4-ի բոլոր «չորս միլիոն» բառերը փոխարինել «տասը միլիոն» բառերով, իսկ բոլոր «երկու միլիոն» բառերը փոխարինել «հինգ միլիոն» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով:

2. Կարգի հավելված 1-ի Աղյուսակ 2-ում 9-րդ սյունակից հետո լրացնել նոր 10-րդ սյունակ.

« 10
»:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
17 դեկտեմբերի 2015 թ., N 266-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. դեկտեմբերի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 19.01.2016 թ. (ՀՀԳՏ N3 (546), 1.02.2016):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մարտի 15-ի թիվ 116-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով բանկերի կողմից ավանդատուին ավանդների հատուցման երաշխավորման պայմանների և կարգի մասին հանձնվող ծանուցման օրինակելի ձևը համապատասխանեցնել օրենսդրական փոփոխություններին,

հիմք ընդունելով «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մարտի 15-ի «Ավանդատուներին ավանդների հատուցման երաշխավորման պայմանների և կարգի մասին հանձնվող ծանուցման օրինակելի ձևը հաստատելու մասին» թիվ 116-Ն որոշմամբ հաստատված «Ավանդների հատուցման երաշխավորման պայմանների և կարգի մասին» ծանուցման ամբողջ տեքստում «4 միլիոն» բառերը փոխարինել «10 միլիոն» բառերով, իսկ «2 միլիոն» բառերը փոխարինել «5 միլիոն» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
17 դեկտեմբերի 2015 թ., N 267-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. դեկտեմբերի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 19.01.2016 թ. (ՀՀԳՏ N3 (546), 1.02.2016):

«Հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդի դադարեցման համար Կենտրոնական բանկի խորհրդի նախնական համաձայնության ստացման կարգը և պայմանները, ֆոնդի դադարեցման մասին գրանցում կատարելու համար ներկայացվող փաստաթղթերի ցանկը, ֆոնդի դադարեցման վերաբերյալ տեղեկատվության հրապարակման ձևը և կարգը» հաստատելու մասին[*]

Նպատակ ունենալով ապահովել պայմանագրային ներդրումային ֆոնդերի դադարեցման, ինչպես նաև դրա վերաբերյալ տեղեկատվության հրապարակման գործընթացների արդյունքում ֆոնդի մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, նշված գործընթացների իրականացման արդյունքում առաջացող ռիսկերի նկատմամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից արդյունավետ վերահսկողությունը, ինչպես նաև պայմանագրային ներդրումային ֆոնդերի դադարեցման գործընթացների թափանցիկությունը,

հիմք ընդունելով «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 102-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ մասերը, «ՀՀ կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետը, 20-րդ հոդվածի «ե» կետը, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդի դադարեցման համար Կենտրոնական բանկի խորհրդի նախնական համաձայնության ստացման կարգը և պայմանները, ֆոնդի դադարեցման մասին գրանցում կատարելու համար ներկայացվող փաստաթղթերի ցանկը, ֆոնդի դադարեցման վերաբերյալ տեղեկատվության հրապարակման ձևը և կարգը»՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
21 դեկտեմբերի 2015 թ., N 273-Ն

Հավելված
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2015 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 273-Ն որոշմամբ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ՖՈՆԴԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ ԳՐԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ, ՖՈՆԴԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՁԵՎԸ ԵՎ ԿԱՐԳԸ

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության տարածքում գործող հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդի դադարեցման համար ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) խորհրդի նախնական համաձայնության տրամադրման համար պահանջվող փաստաթղթերը և տեղեկությունները, դրանք Կենտրոնական բանկ ներկայացնելու կարգը, Կենտրոնական բանկի կողմից նախնական համաձայնության տրամադրման կարգը, ժամկետները և պայմանները, ֆոնդի դադարեցման մասին գրանցում կատարելու համար Կենտրոնական բանկ ներկայացվող փաստաթղթերն ու տեղեկությունները, ինչպես նաև ֆոնդի դադարեցման վերաբերյալ տեղեկատվության հրապարակման կարգը:

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. դեկտեմբերի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 25.01.2016 թ. (ՀՀՊՏ N3 (546), 1.02.2016):

2. Սույն կանոնակարգով ֆոնդի դադարեցման վերաբերյալ դրույթները կիրառվում են նաև ենթաֆոնդի դադարեցման նկատմամբ:

ԳԼՈՒԽ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Սույն կանոնակարգում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.

1) ***«Հաշվետու ժամանակաշրջան»***՝ օրացուցային տարվա սկզբից մեկ ամիս պարբերականությամբ հաշվարկվող ժամանակաշրջան:
2) ***«Ամսաթիվը»***՝ ամսաթիվը/ամիսը/տարեթիվը:
3) ***«Կանոնակարգ 10/03»***՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 301-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ֆոնդի կառավարչի կողմից իր և իր կողմից կառավարվող ֆոնդերի մասին Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ձևերը, բովանդակությունը, ներկայացման կարգը, ժամկետները և պարբերականությունը, կառավարչի կողմից առանձին որոշումների կայացման մասին Կենտրոնական բանկին լրացուցիչ տեղեկությունների տրամադրման կարգը» կանոնակարգ 10/03:
4) ***«Օրենք»***՝ «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք:

4. Սույն կանոնակարգում օգտագործված այլ հասկացություններն ունեն «Ներդրումային ֆոնդերի մասին» և «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում կիրառվող նշանակությունը:

5. Սույն կանոնակարգով սահմանված՝ կառավարչի համար նախատեսված գործողություններն օրենքով նախատեսված դեպքերում կատարվում եմ ֆոնդի պահառուի կողմից:

ԳԼՈՒԽ 3. ՖՈՆԴԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6. Ֆոնդի դադարեցման համար ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի նախնական համաձայնություն ստանալու համար կառավարիչը (պահառուն) Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը և տեղեկությունները.

1) դադարեցման համար նախնական համաձայնություն ստանալու միջնորդագիր՝ համաձայն սույն Կանոնակարգի Հավելված 1-ի,
2) դադարեցման մասին ֆոնդի կառավարչի (պահառուի) իրավասու մարմնի որոշումը,
3) դադարեցման հիմնավորումը,
4) իրականացվելիք միջոցառումները և գործողությունները, դրանց իրականացման ժամանակացույցը,
5) ֆոնդի ակտիվների վաճառքի ու պարտավորությունների մարման (փոխհատուցման) հնարավոր տարբերակների նկարագրությունը, նվազագույն ծախսերի տեսանկյունից նախընտրելի տարբերակը,
6) ֆոնդի դադարեցման վերաբերյալ սույն կանոնակարգի ԳԼՈՒԽ 5-ով հրապարակվելիք տեղեկատվության բովանդակությունը,
7) կառավարչի (պահառուի) ցանկությամբ՝ այլ էական տեղեկատվություն,

7. Սույն գլխով պահանջվող բոլոր փաստաթղթերը Կենտրոնական բանկ են ներկայացվում տպագիր և հայերեն՝ պատվիրված նամակով, առձեռն կամ ներկայացվում են էլեկտրոնային տարբերակով՝ Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով: Տպագիր եղանակով ներկայացվող փաստաթղթերի պատճենները պետք է ստորագրված լինեն կառավարչի (ֆոնդի ժողովի) իրավասու անձի (իսկ կառավարչի բացակայության դեպքում՝ պահառուի իրավասու անձի) կողմից և ներկայացվեն «իսկականի հետ ճիշտ է» մակագրությամբ:

ԳԼՈՒԽ 4. ՖՈՆԴԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

8. Կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է կայացնում ֆոնդի դադարեցման համար Կենտրոնական բանկի խորհրդի նախնական համաձայնություն տրամադրելու կամ տրամադրումը մերժելու մասին՝ սույն Կանոնակարգի 0-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված դիմումը և պահանջվող այլ փաստաթղթերը ներկայացվելու պահից՝ 30 աշխատանքային օրվա ընթացքում:

9. Կենտրոնական բանկը մերժում է ներդրումային ֆոնդի դադարեցման համար ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի նախնական համաձայնության տրամադրումը, եթե՝

1) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում օրենքին կամ այլ իրավական ակտերին, կամ ներկայացվել են կեղծ փաստաթղթեր, կամ ներկայացված փաստաթղթերում արտացոլվել են

ոչ արժանահավատ տեղեկություններ, կամ ներկայացված փաստաթղթերում առկա են թերություններ,

2) Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով ներդրումային ֆոնդի դադարեցման պայմանները բավարար հստակ չեն և (կամ) չեն երաշխավորում ֆոնդի մասնակիցների օրինական շահերը:

10. Ֆոնդի դադարեցման համար Կենտրոնական բանկի խորհրդի նախնական համաձայնություն տալու մասին որոշումն ուժի մեջ մտնելու պահից ֆոնդի փայերի թողարկումը և մարումը կասեցվում են: Փայերի մարման կասեցումը դադարում է սույն կանոնակարգի ԳԼՈՒԽ 7-ով նախատեսված պարտատերերի (բացառությամբ ֆոնդի մասնակիցների) բոլոր պահանջները բավարարելու պահից:

11. Ֆոնդի դադարեցման համար Կենտրոնական բանկի խորհրդի նախնական համաձայնության տրամադրումից հետո կառավարչի կողմից ֆոնդի ակտիվների ներդրման սահմանափակումների խախտումները չեն հանգեցնում կառավարչի նկատմամբ պատժամիջոցների կիրառման:

12. Ֆոնդի դադարեցման համար Կենտրոնական բանկի խորհրդի կողմից նախնական համաձայնության տրամադրումից հետո ֆոնդի անվանումը պետք է պարունակի «Դադարեցվող» բառը:

ԳԼՈՒԽ 5. ՖՈՆԴԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՁԵՎԸ ԵՎ ԿԱՐԳԸ

13. Ներդրումային ֆոնդի դադարեցման համար Կենտրոնական բանկի խորհրդի նախնական համաձայնությունը ստանալուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում կառավարիչը (պահառուն) առնվազն 3000 տպաքանակով հանրապետական տարածում ունեցող մամուլում և իր պաշտոնական ինտերնետային կայքում հայտարարություն է զետեղում ֆոնդի դադարեցման և պարտատերերի պահանջների ներկայացման մասին՝ առնվազն ներառելով հետևյալ տեղեկատվությունը.

1) դադարեցման ենթակա ֆոնդի անվանումը,
2) դադարեցման մասին որոշման կայացման համար իրավասու կառավարչի (պահառուի) անվանումը,
3) դադարեցման հիմքերը,
4) դադարեցման ընթացակարգի և կանխատեսվող ժամկետների ամփոփ նկարագրությունը,
5) եթե դադարեցման ենթակա ֆոնդի փայերը ցուցակված են կարգավորված շուկայում, դադարեցվող ֆոնդի փայերի՝ բորսայական շրջանառությունից հանվելու օրը,
6) ֆոնդի փայատերերի և այլ պարտատերերի կողմից (եթե դրանք պետք է բավարարվեն ֆոնդի միջոցներից) պահանջների ներկայացման ժամկետը և կարգը,
7) նշում, թե ֆոնդի դադարեցման հետ կապված ծախսերը ում միջոցների հաշվին են կատարվելու,
8) նշում, թե բաշխման օրը չներկայացած մասնակիցներին չբաշխված ակտիվներն ինչպես են տնօրինվելու մինչև համապատասխան ներդրողների կողմից դրանց ստացումը:

14. Պարտատերերի պահանջների ներկայացման ժամկետի սկիզբ է համարվում սույն կանոնակարգի 0-րդ կետով նախատեսված հայտարարության հրապարակմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը, իսկ ժամկետը չի կարող պակաս լինել երկու ամսից:

ԳԼՈՒԽ 6. ԿԱՌԱՎԱՐՉԻ (ՊԱՀԱՌՈՒԻ) ԿՈՂՄԻՑ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

15. Սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված հաշվետվությունը կառավարչի (պահառուի) կողմից Կենտրոնական բանկ է ներկայացվում Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով: Սի-Բի-էյ-նեթ համակարգի խափանման դեպքում հաշվետվությունները ներկայացվում են մագնիսական կամ էլեկտրոնային կրիչներով՝ կից ներկայացնելով խափանման վերաբերյալ գրություն:

16. Հաշվետվությունների անվանումները պետք է կոդավորվեն:

17. Հաշվետվության անվանման կոդն ունի հետևյալ կառուցվածքը.

Կոդը	հաշվետվության համարը	կետ	հապավումը
XXXXXL	LHXX	.	Xls

18. Սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված «Կոդը» սյունակում լրացվում է ֆոնդին Կենտրոնական բանկի կողմից նախկինում շնորհված կոդը՝ վերջում ավելացնելով «L» տառը, իսկ «Հաշվետվության համարը» սյունակում հաշվետվության համարի առաջին երկու նիշերի փոխարեն՝ «LH» իսկ 3-4-րդ նիշե-

րի փոխարեն՝ հաշվետվության հերթական համարը: Կոդավորման նշված կարգի պահպանումը պարտադիր է:

19. Ամսական հաշվետվությունը ներկայացվում է մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 7-րդ աշխատանքային օրը (ներառյալ):

20. Ամսական հաշվետվությունում «Ամսաթիվը _____ թ-ից մինչև _____ թ.» լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի առաջին և վերջին օրվա ամսաթվերը: Հաշվետվությունը պետք է պարունակի հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ տվյալները:

21. Եթե հաշվետվության ներկայացման ժամկետի վերջին օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվան, ապա հաշվետվության ներկայացման ժամկետի ավարտի օր է համարվում այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

22. Սույն կանոնակարգով սահմանված ժամկետներից հետո ներկայացվող ճշգրտված հաշվետվությունը ներկայացվում է էլեկտրոնային տարբերակով սույն կանոնակարգի 0-րդ կետի համաձայն: Ընդ որում, միևնույն հաշվետու ժամանակաշրջանի համար մի քանի ճշգրտված հաշվետվությունների ներկայացման դեպքում հավաստի է համարվում ներկայացված վերջին ճշգրտված հաշվետվությունը:

23. Հաշվետվության էլեկտրոնային տարբերակը պետք է հնարավոր լինի ընթերցել էլեկտրոնային ֆորմատով, չպետք է լրացվի «յունիկոդ»-ով, երկու լրացված տողերի միջև ամբողջությամբ դատարկ տողեր չպետք է լինեն, և այն պետք է զերծ լինի ծրագրային կամ այլ տեխնիկական թերությունից: Սույն կետի պահանջը չի տարածվում կառավարչի (պահառուի) վրա, եթե հաշվետվության էլեկտրոնային տարբերակի ծրագրային կամ այլ տեխնիկական թերությունն առկա է Կենտրոնական բանկի կողմից տրամադրված ֆայլերում:

24. Հաշվետվությունները լրացնելիս տեղեկատվությունը պետք է ներկայացնել առանց չակերտների, միայն հայերեն տառերով (տառատեսակ՝ Թայմզ Արմենիան):

ԳԼՈՒԽ 7. ՖՈՆԴԻ ՊԱՐՏԱՏԵՐԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՄԱՆ ՀԵՐԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

25. Ֆոնդի միջոցների իրացման արդյունքում ֆոնդի ակտիվների բաշխման գործընթացը կատարվում է հետևյալ հերթականությամբ.

1) առաջին հերթին՝ բավարարվում են ֆոնդի միջոցների հաշվին կատարվող ծախսերից բխող պահանջները (բացի կառավարչի պարգևավճարից),
2) երկրորդ հերթին՝ գանձվում է կառավարչի պարգևավճարը,
3) երրորդ հերթին՝ բավարարվում են ֆոնդի մասնակիցներից (ներառյալ կառավարիչը) բացի այլ պարտատերերի պահանջները,
4) չորրորդ հերթին՝ բավարարվում են ֆոնդի մասնակիցների (ներառյալ կառավարչի) փայերի դիմաց պահանջները:

26. Միևնույն հերթի պարտատերերն ունեն իրենց պահանջների բավարարման հավասար իրավունքներ: Միևնույն հերթի պարտատերերի պահանջները բավարարվում են նախորդ հերթի բոլոր պահանջները լրիվ բավարարելուց հետո:

27. Կառավարչի (պահառուի) կողմից պարտատիրոջ պահանջները մերժելու կամ դրանք քննարկելուց խուսափելու դեպքում կառավարիչը (պահառուն) պատշաճ ձևով տեղեկացնում է վերջինիս, որ մինչև դադարեցման հաշվեկշռի հաստատումը պարտատերն իրավունք ունի բողոքարկելու կառավարչի (պահառուի) գործողությունները: Ընդ որում, եթե պարտատիրոջ պահանջը ենթակա է բավարարման այն հերթում, որով այդ պահին կառավարիչը (պահառուն) իրականացնում է պահանջների բավարարումը, ապա դատարանը կարող է կասեցնել տվյալ հերթով պահանջների բավարարումը՝ մինչև որոշման կայացումը:

28. Կառավարչի (պահառուի) կողմից մերժված պահանջները, եթե պարտատերը հայցով չի դիմել դատարան, ինչպես նաև դատարանի վճռով մերժված պահանջները համարվում են ներված:

ԳԼՈՒԽ 8. ՖՈՆԴԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵԿՇՌԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՐՏԱՏԵՐԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

29. Ֆոնդի պարտատերերի պահանջների ներկայացման ժամկետների ավարտից հետո, դրան հաջորդող կառավարչի (պահառուի) կազմած դադարեցման միջանկյալ հաշվեկշիռը հրապարակելուց հետո կառավարչի (պահառուի) կողմից ամսական կտրվածքով Կենտրոնական բանկ են ներկայացվում տեղեկություններ դադարեցման միջանկյալ հաշվեկշռի կազմումից մինչև դադարեցման հաշվեկշռի կազմումն ընկած ժամանակահատվածում պարտատերերի պահանջների բավարարման գործընթացի վերաբերյալ՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 2-ի: Ընդ որում՝ նշված ժամանակահատվածի համար Հավելված 2-ը լրացնելիս հաշվետու ժամանակաշրջանի սկիզբ է համարվում դադարեցման միջանկյալ հաշվե-

կշռի հրապարակման օրը, իսկ հաշվետու ժամանակաշրջանի վերջին օր է համարվում կառավարչի (պահառուի) կողմից ֆոնդի դադարեցման հաշվեկշիռ կազմելու օրը: Պարտատերերի պահանջների բավարարման հերթերը լրացնելիս հիմք է ընդունվում սույն կանոնակարգի ԳԼՈՒԽ 7-ով սահմանված հերթականությունը:

30. Հավելված 2-ի 2-րդ սյունակում լրացվում են այն պարտատերերի անունները, ազգանունները (անվանումները), որոնց պահանջները կառավարիչը (պահառուն) բավարարել է հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում:

31. Հավելված 2-ի 3-րդ սյունակում լրացվում է տվյալ պարտատիրոջ նկատմամբ դադարեցվող ֆոնդի ունեցած պարտավորությունների համապատասխան հաշվեկշռային հաշվի համարը:

32. Հավելված 2-ի 4-րդ սյունակում լրացվում է դադարեցվող ֆոնդին ներկայացված յուրաքանչյուր պարտատիրոջ պահանջի մեծությունը (ըստ պահանջի բավարարման հերթականության)՝ հաշվետու ժամանակաշրջանի սկզբի դրությամբ:

33. Հավելված 2-ի 7-րդ սյունակում լրացվում են բոլոր այն պահանջները, որոնք ներկայացվել են կառավարչի (պահառուի) կողմից սահմանված համապատասխան ժամանակահատվածում, սակայն մինչև տվյալ հերթի պահանջների բավարարման համար հայտարարված ժամկետի վերջին օրը պարտատերը չի ներկայացել պահանջը ստանալու համար (ներառյալ այն ֆոնդի մասնակիցների պահանջները, որոնք չեն ներկայացվել նշված ժամանակահատվածում, սակայն այդ մասնակիցները գրանցված են ֆոնդի մասնակիցների ռեեստրում):

ԳԼՈՒԽ 9. ՖՈՆԴԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ ԳՐԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ

34. Ֆոնդի դադարեցման փաստը գրանցելու համար Կենտրոնական բանկ ներկայացվում են.

1) միջնորդագիր ֆոնդի դադարեցման հաշվեկշռի հաստատման համար համաձայն սույն կանոնակարգի Հավելված 3-ի,
2) ֆոնդի դադարեցման հաշվեկշիռը:

35. Սույն կանոնակարգի 0-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելուց հետո տասնօրյա ժամկետում Կենտրոնական բանկը կայացնում է դադարեցման հաշվեկշիռը հաստատելու կամ հաստատումը մերժելու մասին որոշում: Կենտրոնական բանկը մերժում է դադարեցման հաշվեկշռի հաստատումը, եթե կառավարիչը (պահառուն).

1) ֆոնդի դադարեցման միջոցները բաշխելիս խախտել է ֆոնդի մասնակիցների (այլ պարտատերերի) պահանջների բավարարման՝ սույն կանոնակարգի ԳԼՈՒԽ 7-ով սահմանված հերթականությունը,
2) կատարել է ֆոնդի առանձին մասնակիցներին (այլ պարտատերերին) օրենքով սահմանված չափը գերազանցող վճարումներ:

ԳԼՈՒԽ 10. ՖՈՆԴԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՁԵՎԸ ԵՎ ԿԱՐԳԸ

36. Պարտատերերի պահանջների ներկայացման ժամկետի ավարտից հետո՝ 7 օրյա ժամկետում կառավարիչը (պահառուն) կազմում, հաստատում և առնվազն 3000 տպաքանակ ունեցող մամուլում և կառավարչի (պահառուի) պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակում է հաշվետվություն միջանկյալ դադարեցման հաշվեկշռի վերաբերյալ՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 4-ի: Ընդ որում՝ սույն կանոնակարգի Հավելված 4-ում հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա ամսաթիվ տողում լրացվում է Օրենքով սահմանված կարգով պարտատերերի պահանջների ներկայացման ժամկետի վերջին օրվա ամսաթիվը:

37. Կառավարիչը (պահառուն) ֆոնդի ստանձնած պարտավորությունների կատարման, միջոցների իրացման և ֆոնդի ակտիվների բաշխման ողջ ժամանակամիջոցի համար առնվազն ամիսը մեկ՝ մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 15-ը, իր պաշտոնական ինտերնետային կայքում և առնվազն 3000 տպաքանակ ունեցող մամուլում և կառավարչի (պահառուի) պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակում է իր գործունեության վերաբերյալ հետևյալ տեղեկությունները՝

1) դադարեցվող ֆոնդի կառավարչի (պահառուի) գտնվելու վայրը,
2) դադարեցվող ֆոնդի պարտատերերի պահանջների բավարարման գործընթացի վերաբերյալ հաշվետվություն ամսական պարբերականությամբ՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 5-ի, ընդ որում՝ սույն հաշվետվության համար առաջին հաշվետու ամիս է համարվում ֆոնդի միջոցների իրացման և ֆոնդի ակտիվների բաշխման օրվանից մինչև տվյալ ամսվա վերջին օրն ընկած ժամանակահատվածը,

3) ֆոնդի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, որը կառավարիչը կազմում և ներկայացնում է համաձայն «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 92-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Կենտրոնական բանկի կողմից ընդունելի և միջազգային պրակտիկայում նման ֆոնդերի համար ընդունված սկզբունքներին համապատասխան՝ հաշվետվության վերնագրում նշելով «Դադարեցվող ֆոնդի ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն» բառերը:

38. Կենտրոնական բանկի կողմից ֆոնդի դադարեցման հաշվեկշիռը (որն ամփոփում է դադարեցման գործընթացը) հաստատելու մասին որոշումը կայացնելու պահից եռօրյա ժամկետում կառավարիչը (պահառուն) առնվազն 3000 տպաքանակ ունեցող մամուլում հրապարակում է.

1) ֆոնդի դադարեցման գործընթացի ավարտի մասին հայտարարություն (ազատ ոճով),
2) դադարեցման ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, որը կառավարիչը կազմում և ներկայացնում է համաձայն «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 92-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Կենտրոնական բանկի կողմից ընդունելի և միջազգային պրակտիկայում նման ֆոնդերի համար ընդունված սկզբունքներին համապատասխան՝ հաշվետվության վերնագրում նշելով «Դադարեցվող ֆոնդի ամփոփ ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն» բառերը:

39. Կառավարիչը (պահառուն) պարտավոր է կառավարչի (պահառուի) տարածքում՝ տեսանելի տեղում, փակցնել սույն գլխով սահմանված հրապարակվող տեղեկությունները:

Հավելված 1

2015 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 273-Ն որոշմամբ հաստատված «Հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդի դադարեցման համար Կենտրոնական բանկի խորհրդի նախնական համաձայնության ստացման կարգը և պայմանները, ֆոնդի դադարեցման մասին գրանցում կատարելու համար ներկայացվող փաստաթղթերի ցանկը, ֆոնդի դադարեցման վերաբերյալ տեղեկատվության հրապարակման ձևը և կարգը» կարգի

ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ

(ֆոնդի դադարեցման համար Կենտրոնական բանկի խորհրդի նախնական համաձայնություն ստանալու)

Հարգելի _____

_____

(դիմողի անվանումը, գտնվելու վայրը)

Համաձայն «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և «Հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդի դադարեցման համար Կենտրոնական բանկի խորհրդի նախնական համաձայնության ստացման կարգը և պայմանները, ֆոնդի դադարեցման մասին գրանցում կատարելու համար ներկայացվող փաստաթղթերի ցանկը, ֆոնդի դադարեցման վերաբերյալ տեղեկատվության հրապարակման ձևը և կարգը» Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2015 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 273-Ն որոշման՝ Ձեզ ենք ներկայացնում ֆոնդի դադարեցման համար նախնական համաձայնություն ստանալու միջնորդագիրը, կից փաստաթղթերը և տեղեկությունները:

Առդիր՝ ___ էջ:

Մենք՝ ներքոստորագրյալներս, հավաստիացնում ենք, որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն միջնորդագրին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում ենք, որ տեղեկատվությունն արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է միջնորդագրի մերժմանը:

Միջնորդագիրը ներկայացնող անձ՝

_____

(կառավարչի (պահառուի) իրավասու անձի անուն, ազգանունը, ստորագրությունը)

«__»_____ 20__ թ.

Հավելված 2

2015 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 273-Ն որոշմամբ հաստատված «Հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդի դադարեցման համար Կենտրոնական բանկի խորհրդի նախնական համաձայնության ստացման կարգը և պայմանները, ֆոնդի դադարեցման մասին գրանցում կատարելու համար ներկայացվող փաստաթղթերի ցանկը, ֆոնդի դադարեցման վերաբերյալ տեղեկատվության հրապարակման ձևը և կարգը» կարգի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1
ԴԱԴԱՐԵՑՎՈՂ ՖՈՆԴԻ ՊԱՐՏԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
(ամսական)

Դադարեցվող ֆոնդի անվանումը _____

Ամսաթիվը _____ *թ-ից*

մինչև _____ *թ.*

(հազար դրամ)

Պահանջների բավարարման հերթականությունը	**Պարտատերերի անունները, ընդհանրացնող պահանջների տակ ընդգրկվող պարտատերերի թվաքանակը**	**Դադարեցման օրվա դրությամբ ընդհանուր պահանջների չափը**	**Պահանջի վերաբերյալ ընդհանուր վեճի կամ դատական գործընթացի առկայության դեպքում՝ վեճի կամ դատական գործընթացի մասին տեղեկություն**	**Պահանջի վերաբերյալ ընդհանուր վեճի կամ դատական գործընթացի առկայության դեպքում՝ վեճի կամ դատական գործընթացի մասին տեղեկություն**	**Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում բավարարված պահանջի չափը, այդ թվում՝**		**Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ընդհանուր պահանջների չափը**	**Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ընդհանուր պահանջների չափը**
					Դրամով կիրառվող միջոցների	Կոտորակային կամ դրամից տարբերվող միջոցների		
1	2	3	4	5	6	7	8	9
1-ին հերթով բավարարված պահանջներ								
Ընդամենը 1-ին հերթով								
2-րդ հերթով բավարարված պահանջներ								
Ընդամենը 2-րդ հերթով								
3-րդ հերթով բավարարված պահանջներ								
Ընդամենը 3-րդ հերթով								
4-րդ հերթով բավարարված պահանջներ								
Ընդամենը 4-րդ հերթով								
ԸՆԴԱՄԵՆԸ (1+2+3+4)								

Հավելված 3

2015 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 273-Ն որոշմամբ հաստատված «Հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդի դադարեցման համար Կենտրոնական բանկի խորհրդի նախնական համաձայնության ստացման կարգը և պայմանները, ֆոնդի դադարեցման մասին գրանցում կատարելու համար ներկայացվող փաստաթղթերի ցանկը, ֆոնդի դադարեցման վերաբերյալ տեղեկատվության հրապարակման ձևը և կարգը» կարգի

ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ

(ֆոնդի դադարեցման հաշվեկշռի հաստատման համար)

Հարգելի _____

_____

(դիմողի անվանումը, գտնվելու վայրը)

Համաձայն «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և «Հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդի դադարեցման համար Կենտրոնական բանկի խորհրդի նախնական համաձայնության ստացման կարգը և պայմանները, ֆոնդի դադարեցման մասին գրանցում կատարելու համար ներկայացվող փաստաթղթերի ցանկը, ֆոնդի դադարեցման վերաբերյալ տեղեկատվության հրապարակման ձևը և կարգը» Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2015 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 273-Ն որոշման՝ Ձեզ ենք ներկայացնում ֆոնդի դադարեցման հաշվեկշռի հաստատման միջնորդագիրը և դադարեցման հաշվեկշիռը:

Առդիր՝ ____ էջ:

Մենք՝ ներքոստորագրյալներս, հավաստիացնում ենք, որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն միջնորդագրին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում ենք, որ տեղեկատվությունն արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է միջնորդագրի մերժմանը:

Միջնորդագիրը ներկայացնող անձ՝

_____

(կառավարչի (պահառուի) իրավասու անձի անուն, ազգանունը, ստորագրությունը)

«__» _____ 20__ թ.

Հավելված 4

2015 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 273-Ն որոշմամբ հաստատված «Հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդի դադարեցման համար Կենտրոնական բանկի խորհրդի նախնական համաձայնության ստացման կարգը և պայմանները, ֆոնդի դադարեցման մասին գրանցում կատարելու համար ներկայացվող փաստաթղթերի ցանկը, ֆոնդի դադարեցման վերաբերյալ տեղեկատվության հրապարակման ձևը և կարգը» կարգի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2
ՄԻՋԱՆԿՅԱԼ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՀԱՇՎԵԿՇՌԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
(միանվագ)

Դադարեցվող ֆոնդի անվանումը _____

Հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա ամսաթիվը _____

(հազար դրամ)

N	Ֆոնդի պարտատերերի կողմից ներկայացված պահանջներ	Հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ ներկայացված պահանջներ		Հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ չներկայացված պահանջներ
		Ընդամենը	Կառավարչի (պահառուի) կողմից ընդունված պահանջներ	
1	2	3	4	5
2	Ֆիզիկական անձանց կողմից ներկայացված պահանջներ			
3	Հայաստանի Հանրապետության կողմից, այդ թվում՝ հարկային մարմնի կողմից ներկայացված պահանջներ			
4	Իրավաբանական անձանց կողմից ներկայացված պահանջներ			
5	Այլ անձանց կողմից ներկայացված պահանջներ			
Ընդամենը				

Հավելված 5

2015 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 273-Ն որոշմամբ հաստատված «Հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդի դադարեցման համար Կենտրոնական բանկի խորհրդի նախնական համաձայնության ստացման կարգը և պայմանները, ֆոնդի դադարեցման մասին գրանցում կատարելու համար ներկայացվող փաստաթղթերի ցանկը, ֆոնդի դադարեցման վերաբերյալ տեղեկատվության հրապարակման ձևը և կարգը» կարգի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

ԴԱԴԱՐԵՑՎՈՂ ՖՈՆԴԻ ՊԱՐՏԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(ամսական)

Դադարեցվող ֆոնդի անվանումը _____

Ամսաթիվը _____ *թ-ից*

մինչև _____ *թ.*

(հազար դրամ)

N	Ֆոնդի պարտատերերի կողմից ներկայացված պահանջները	Պահանջի չափը հաշվետու ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում բավարարված պահանջի չափը, այդ թվում՝		Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ներված պահանջի չափը	Պահանջի չափը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ
			Դրամական միջոցների հաշվին	Նոտարի depository հաշվեցման տրամադրված		
1	2	3	4	5	6	7
2	Ֆիզիկական անձանց կողմից ներկայացված պահանջներ					
3	Հայաստանի Հանրապետության նկատմամբ, այդ թվում՝ հարկային մարմնի կողմից ներկայացված պահանջներ					
4	Իրավաբանական անձանց կողմից ներկայացված պահանջներ					
5	Այլ անձանց կողմից ներկայացված պահանջներ					
Ընդհանուր գումար						

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 12-ի թիվ 44-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով ճշգրտել վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկվող ակտիվների ռիսկի կշիռները և շուկայական ռիսկի հաշվարկում ընդգրկվող տարրերը,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետը, 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և 3-րդ մասը, 72-րդ և 73-րդ հոդվածները, 82-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 12-ի ««Ներդրումային ընկերությունների հիմնական տնտեսական նորմատիվները, դրանց սահմանաչափերը, հաշվարկման կարգը, հաշվարկում մասնակցող տարրերի կազմը, սահմանված տնտեսական նորմատիվների խախտումների չափը» կանոնակարգ 4/02-ը հաստատելու մասին» թիվ 44-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ընկերությունների հիմնական տնտեսական նորմատիվները, դրանց սահմանաչափերը, հաշվարկման կարգը, հաշվարկում մասնակցող տարրերի կազմը, սահմանված տնտեսական նորմատիվների խախտումների չափը» կանոնակարգ 4/02-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) Կանոնակարգի հավելված 1-ի գլուխ 2-ի աղյուսակ 1-ում.

ա. 7-րդ, 10-րդ և 27-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

7.	Պահանջներ Արժույթի միջազգային հիմնադրամի, Համաշխարհային բանկի խումբ կազմող Վերակառուցման և Զարգացման Միջազգային բանկի և Միջազգային ֆինանսական կորպորացիայի, Եվրոպական կենտրոնական բանկի, Եվրոպական վերակառուցման և զարգացման բանկի, Ասիական զարգացման բանկի, Աֆրիկյան զարգացման բանկի, Միջամերիկյան զարգացման բանկի, Եվրոպական ներդրումային բանկի, Եվրոպական ներդրումային հիմնադրամի, Սկանդինավյան ներդրումային բանկի, Կարիբյան զարգացման բանկի, Իսլամական զարգացման բանկի, Առևտրի և զարգացման սևծովյան բանկի, ինչպես նաև Եվրոպական զարգացման բանկի խորհրդի նկատմամբ	0	0

10.	Վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպությունների կողմից թողարկված պարտատոմսեր	0	10

27.	Պահանջներ հարկային օրենսդրությամբ սահմանված հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով վճարման ենթակա գումարներից, հարկային օրենսդրությամբ սահմանված կանխավճարներից ավելի վճարված գումարների գծով	100	-

»,

բ. 6-րդ և 17-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել,

գ. լրացնել 35-38-րդ կետեր՝ հետևյալ բովանդակությամբ.

«

35. Հայաստանի Հանրապետությանը վարկանշային գործակալությունների (Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ կամ Մուդիզ) կողմից տրված վարկանիշից բարձր վարկանիշ ստացած ՀՀ ռեզիդենտ ոչ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջներ	0%	0%
36. Հայաստանի Հանրապետությանը վարկանշային գործակալությունների (Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ կամ Մուդիզ) կողմից տրված վարկանիշին համապատասխան վարկանիշ ստացած ՀՀ ռեզիդենտ ոչ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջներ	0%	10%
37. Հայաստանի Հանրապետությանը վարկանշային գործակալությունների (Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ կամ Մուդիզ) կողմից տրված վարկանիշից մեկ վարկանիշ ցածր ստացած ՀՀ ռեզիդենտ ոչ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջներ	20%	30%
38. Հայաստանի Հանրապետությանը վարկանշային գործակալությունների (Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ կամ Մուդիզ) կողմից տրված վարկանիշից երկու վարկանիշ ցածր ստացած ՀՀ ռեզիդենտ ոչ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջներ	50%	75%

»,

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. դեկտեմբերի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 19.01.2016 թ. (ՀՀԳՏ N3 (546), 1.02.2016):

2) Կանոնակարգի հավելված 1-ը լրացնել 6.1-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«6.1. ՀՀ ռեզիդենտ ոչ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջները կարող են ստանալ սույն հավելվածի աղյուսակ 1-ի 35-ից 38-րդ կետերով սահմանված ռիսկի կշիռներին համապատասխան ռիսկի կշիռներ՝ նաև Ստանդարտ և Փուրզ, Ֆիթչ և (կամ) Մուդիզ վարկանշային կազմակերպությունների կողմից տրամադրված տեղական վարկանիշերի առկայության դեպքում:»,

3) Կանոնակարգի Հավելված 1-ի 8-րդ կետից հանել «(այդ թվում՝ Կենտրոնական բանկից վարկանիշ ստացած ոչ ֆինանսական կազմակերպությունների) բառերը»,

4) Կանոնակարգի Հավելված 1-ի 9-րդ կետում.

ա. «100 տոկոս» բառերը փոխարինել «համապատասխանաբար 100 կամ 150 տոկոս» բառերով,

բ. 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) դատարանի որոշմամբ սառեցված կամ կալանված ակտիվները կշռվում են այդ ակտիվների համար սահմանված ամենաբարձր ռիսկի կշռով,»,

գ. լրացնել 2.1-րդ ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1) այն դեպքում, երբ սույն հավելվածի Աղյուսակ 1-ի 24-րդ կետը բավարարող պահանջները միաժամանակ բավարարում են նույն աղյուսակի 15-րդ, 16-րդ, 18-րդ, 19-րդ, 35-րդ, 36-րդ, 37-րդ կամ 38-րդ կետերը, ապա տվյալ պահանջը ռիսկով կշռված ակտիվների հաշվարկում ընդգրկելու նպատակով պետք է հիմք ընդունել համապատասխանաբար 15-րդից 19-րդ, 35-րդից 38-րդ կետերով սահմանված վարկանիշերին համապատասխան ռիսկի կշիռները.»,

5) Կանոնակարգի Հավելված 1-ի 17-րդ կետի 1-ին ենթակետում «կամ Կենտրոնական բանկի» բառերը հանել,

6) Կանոնակարգի Հավելված 1-ի 23.1-րդ կետի վերջին պարբերության մեջ «վաճառված արժեթղթի արժույթը» բառերը փոխարինել «տրամադրված դրամական միջոցների արժույթը» բառերով,

7) Կանոնակարգի Հավելված 1-ի 24-րդ կետի առաջին ենթակետում «ռիսկի կշռով, եթե» բառերից հետո լրացնել «որպես գրավ հանդես է գալիս տվյալ ներդրումային ընկերությունում պահվող Հայաստանի Հանրապետության դրամը, առաջին խմբի մեջ մտնող արտարժութային միջոցները, ռուբլին, կամ եթե» բառերով,

8) Կանոնակարգի 26-րդ կետի աղյուսակ 3-ում.

ա. 14-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«14. ՀՀ ռեզիդենտ ոչ ֆինանսական կազմակերպությունների կողմից թողարկված պարտատոմսեր, որոնց վարկանիշը հավասար կամ բարձր է վարկանշային գործակալությունների (Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ կամ Մուդիզ) կողմից Հայաստանի Հանրապետությանը տրված՝ մեկ վարկանիշ ցածր վարկանիշից:»,

բ. 16-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«16. ՀՀ ռեզիդենտ ոչ ֆինանսական կազմակերպությունների բաժնետոմսեր, որոնց վարկանիշը հավասար կամ բարձր է վարկանշային գործակալությունների (Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ կամ Մուդիզ) կողմից Հայաստանի Հանրապետությանը տրված՝ մեկ վարկանիշ ցածր վարկանիշից:»,

9) Կանոնակարգի Հավելված 1-ի 27-րդ կետում.

ա. 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) ՀՀ ռեզիդենտ ոչ ֆինանսական կազմակերպությունների կողմից թողարկված պարտատոմսեր, որոնց վարկանիշը հավասար կամ բարձր է վարկանշային գործակալությունների (Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ կամ Մուդիզ) կողմից Հայաստանի Հանրապետությանը տրված՝ մեկ վարկանիշ ցածր վարկանիշից:»,

բ. 9-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9) ՀՀ ռեզիդենտ ոչ ֆինանսական կազմակերպությունների բաժնետոմսեր, որոնց վարկանիշը հավասար կամ բարձր է վարկանշային գործակալությունների (Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ կամ Մուդիզ) կողմից Հայաստանի Հանրապետությանը տրված՝ մեկ վարկանիշ ցածր վարկանիշից:»,

10) Կանոնակարգի Հավելված 1-ի 30-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

11) Կանոնակարգի Հավելված 1-ի 37-րդ կետում «, ինչպես նաև Կենտրոնական բանկի կողմից վարկանիշ ստացած ոչ ֆինանսական կազմակերպությունների» բառերը հանել,

12) Կանոնակարգի Հավելված 2-ում.

ա. 25-րդ կետի 2-րդ ենթակետում «, ինչպես նաև Կենտրոնական բանկի կողմից «Բ-» և ավելի բարձր վարկանիշ ստացած ոչ ֆինանսական կազմակերպությունների պարտքային արժեթղթերը» բառերը փոխարինել «, ինչպես նաև ՀՀ ռեզիդենտ այն ոչ ֆինանսական կազմակերպությունների պարտքային արժեթղթերը, որոնց վարկանիշը հավասար կամ բարձր է վարկանշային գործակալությունների

(Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ կամ Մուդիզ) կողմից Հայաստանի Հանրապետությանը տրված վարկանիշից:» բառերով,

բ. 60-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկի, վարկային կազմակերպության կապիտալի գործիք է կամ /ԲԲԲ-/Բաա3/ և ավելի բարձր վարկանիշ ունեցող բանկի կապիտալի գործիք, որը մտնում է սույն կանոնակարգի հավելված 1-ի 29-րդ կետի աղյուսակով սահմանվող որևէ բորսայական ինդեքսի մեջ, կամ ՀՀ ռեզիդենտ ոչ բանկ կազմակերպության կապիտալի գործիք է, որի վարկանիշը հավասար կամ բարձր է վարկանշային գործակալությունների (Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ կամ Մուդիզ) կողմից Հայաստանի Հանրապետությանը տրված՝ մեկ վարկանիշ ցածր վարկանիշից, կամ /Ա-/Ա3/ և ավելի բարձր վարկանիշ ունեցող օտարերկրյա ոչ բանկ կազմակերպության կապիտալի գործիք, որը մտնում է սույն կանոնակարգի հավելված 1-ի 29-րդ կետի աղյուսակով սահմանվող որևէ բորսայական ինդեքսի մեջ,»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հուլիսի 1-ին, բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված 7-րդ և 27-րդ կետերի փոփոխությունների, որոնք ուժի մեջ են մտնում սույն որոշման պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: Ընդ որում, մինչև 2016 թվականի հուլիսի 1-ը կնքված պայմանագրերի և թողարկված արժեթղթերի նկատմամբ կիրառվում են հետևյալ ռիսկի կշիռները մինչև ՀՀ կենտրոնական բանկի կողմից տվյալ առևտրային կազմակերպությունների վարկանիշերի դադարեցումը, կամ սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանված տեղական վարկանիշերի տրամադրման համակարգի ներդրմանը հաջորդող 6 ամիսների ընթացքում:

Պահանջներ Կենտրոնական բանկի կողմից վարկանիշ ստացած կազմակերպությունների նկատմամբ	«Ա»-ից «Բ -»	20	«Ա+»-ից «Բ -»	30
	«Գ+»-ից «Գ -»	50	«Գ+»-ից «Գ -»	75
	«Դ+»-ից «Դ -»	100	«Դ+»-ից «Դ -»	150
	«Ե+»-ից «Զ»	150	«Ե+»-ից «Զ»	225

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
18 դեկտեմբերի 2015 թ., N 274-Ն

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 311-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով ճշգրտել վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկվող ակտիվների ռիսկի կշիռները և շուկայական ռիսկի հաշվարկում ընդգրկվող տարրերը,

հիմք ընդունելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը և 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 2-ի ««Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը, վերաապահովագրողներին չարգելված համարելու չափանիշները» կանոնակարգ 3/02-ը հաստատելու մասին թիվ 311-Ն որոշմամբ հաստատված ,Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը, վերաապահովագրողներին չարգելված համարելու չափանիշները» կանոնակարգ 3/02-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կանոնակարգի 25-րդ կետի 5-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) ՀՀ ռեզիդենտ ոչ ֆինանսական կազմակերպությունների արժեթղթեր՝ ընթացիկ (շուկայական) արժեքով, որոնց վարկանիշը հավասար կամ բարձր է վարկանշային գործակալությունների («Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ կամ Մուդիզ) կողմից Հայաստանի Հանրապետությանը տրված՝ մեկ վարկանիշ ցածր վարկանիշից:»,

2) Կանոնակարգի 30-րդ կետի Աղյուսակի 4-րդ ենթակետում «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից «Ա», «Բ» և «Գ» խմբի վարկանիշ ստացած կազմակերպությունների արժեթղթեր՝ ընթացիկ (շուկայական) արժեքով» բառերը փոխարինել «ՀՀ ռեզիդենտ ոչ ֆինանսական կազմակերպությունների արժեթղթեր՝ ընթացիկ (շուկայական) արժեքով, որոնց վարկանիշը հավասար կամ բարձր է վարկանշային գործակալությունների (Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ կամ Մուդիզ) կողմից Հայաստանի Հանրապետությանը տրված՝ մեկ վարկանիշ ցածր վարկանիշից:» բառերով,

3) Կանոնակարգի 35-րդ կետում «38.2-րդ կետի» բառերը փոխարինել «38.3-րդ կետի» բառերով,

4) Կանոնակարգի Հավելված 2-ի Աղյուսակ 1-ում.

ա. 10.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

10.1	Վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպությունների կողմից թողարկված պարտատոմսեր	0	10

»,

բ. 19-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

գ. լրացնել նոր 37-ից 40-րդ կետեր՝ հետևյալ բովանդակությամբ.

«

37.	Հայաստանի Հանրապետությանը վարկանշային գործակալությունների (Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ կամ Մուդիզ) կողմից տրված վարկանիշից բարձր վարկանիշ ստացած ՀՀ ռեզիդենտ ոչ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջներ	0%	0%
38.	Հայաստանի Հանրապետությանը վարկանշային գործակալությունների (Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ կամ Մուդիզ) կողմից տրված վարկանիշին համապատասխան վարկանիշ ստացած ՀՀ ռեզիդենտ ոչ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջներ	0%	10%
39.	Հայաստանի Հանրապետությանը վարկանշային գործակալությունների (Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ կամ Մուդիզ) կողմից տրված վարկանիշից մեկ վարկանիշ ցածր ստացած ՀՀ ռեզիդենտ ոչ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջներ	20%	30%

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. դեկտեմբերի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 19.01.2016 թ. (ՀՀԳՏ N3 (546), 1.02.2016):

40.	Հայաստանի Հանրապետությանը վարկանշային գործակալությունների (Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ կամ Մուդիզ) կողմից տրված վարկանիշից երկու վարկանիշ ցածր ստացած ՀՀ ռեզիդենտ ոչ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջներ	50%	75%

»:

5) Կանոնակարգի Հավելվածը 2-ը լրացնել նոր 5.1-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«5.1. ՀՀ ռեզիդենտ ոչ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջները կարող են ստանալ Աղյուսակի 1-ի 37-ից 40-րդ կետերով սահմանված ռիսկի կշիռներին համապատասխան ռիսկի կշիռներ՝ նաև Ստանդարտ և Փուրզ, Ֆիթչ և (կամ) Մուդիզ վարկանշային կազմակերպությունների կողմից տրամադրված տեղական վարկանիշերի առկայության դեպքում:»,

6) Կանոնակարգի Հավելված 2-ի 7-րդ կետում «(այդ թվում՝ Կենտրոնական բանկից վարկանիշ ստացած ոչ ֆինանսական կազմակերպությունների)» բառերը հանել,

7) Կանոնակարգի Հավելված 2-ի 8-րդ կետում.

ա. 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) ոչ ստանդարտ կամ կասկածելի դասակարգված ակտիվները, միջին ռիսկային և բարձր ռիսկային դասակարգված արժեթղթերը կամ դատարանի որոշմամբ սառեցված կամ կալանված ակտիվները կշռվում են այդ ակտիվների համար սահմանված ամենաբարձր ռիսկի կշռով,»,

բ. 3-րդ ենթակետում «17-ից 21-րդ» բառերից հետո լրացնել «, 37-ից 40-րդ» բառերը,

8) Կանոնակարգի Հավելված 2-ի 18-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

9) Կանոնակարգի Հավելված 2-ի 25-րդ կետում «, ինչպես նաև Կենտրոնական բանկի կողմից վարկանիշ ստացած ոչ ֆինանսական կազմակերպությունների» բառերը հանել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերի, որոնք ուժի մեջ են մտնում 2016 թ. հուլիսի 1-ին: Ընդ որում, մինչև 2016 թ. հուլիսի 1-ը կնքված պայմանագրերի և թողարկված արժեթղթերի նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ ռիսկի կշիռները՝ մինչև ՀՀ կենտրոնական բանկի կողմից տվյալ առևտրային կազմակերպությունների վարկանիշերի դադարեցումը, կամ սույն որոշման 1-ին կետի 5-րդ ենթակետով սահմանված տեղական վարկանիշերի տրամադրման համակարգի ներդրմանը հաջորդող 6 ամիսների ընթացքում:

Պահանջներ Կենտրոնական բանկի կողմից վարկանիշ ստացած կազմակերպությունների նկատմամբ	«Ա»-ից «Բ -»	20		«Ա+»-ից «Բ -»	30
	«Գ+»-ից «Գ -»	50		«Գ+»-ից «Գ -»	75
	«Դ+»-ից «Դ -»	100		«Դ+»-ից «Դ -»	150
	«Ե+»-ից «Զ»	150		«Ե+»-ից «Զ»	225

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
18 դեկտեմբերի 2015 թ., N 275-Ն

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի նոյեմբերի 5-ի թիվ 347-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով ճշգրտել ռիսկով կշռված ակտիվների հաշվարկը,

հիմք ընդունելով «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի նոյեմբերի 5-ի ««Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14-ը հաստատելու մասին» թիվ 347-Ն որոշմամբ հաստատված «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 14) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կանոնակարգ 14-ի 23-րդ կետով սահմանված աղյուսակի 18-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

2) Կանոնակարգ 14-ի 23-րդ կետով սահմանված աղյուսակը 18-րդ կետից հետո լրացնել նոր 18.1-18.4 կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«

18.1. Հայաստանի Հանրապետությանը վարկանշային գործակալությունների (Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ կամ Մուդիզ) կողմից տրված վարկանիշից բարձր վարկանիշ ստացած ՀՀ ռեզիդենտ ոչ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջներ	0%	0%
18.2. Հայաստանի Հանրապետությանը վարկանշային գործակալությունների (Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ կամ Մուդիզ) կողմից տրված վարկանիշին համապատասխան վարկանիշ ստացած ՀՀ ռեզիդենտ ոչ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջներ	0%	10%
18.3. Հայաստանի Հանրապետությանը վարկանշային գործակալությունների (Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ կամ Մուդիզ) կողմից տրված վարկանիշից մեկ վարկանիշ ցածր ստացած ՀՀ ռեզիդենտ ոչ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջներ	20%	30%
18.4. Հայաստանի Հանրապետությանը վարկանշային գործակալությունների (Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ կամ Մուդիզ) կողմից տրված վարկանիշից երկու վարկանիշ ցածր ստացած ՀՀ ռեզիդենտ ոչ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջներ	50%	75%

»:

3) Կանոնակարգ 14-ի 27-րդ կետից հետո լրացնել նոր 27.1 կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«27.1. ՀՀ ռեզիդենտ ոչ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջները կարող են ստանալ 23-րդ կետում սահմանված աղյուսակի 18.1-ից 18.4-րդ կետերով սահմանված ռիսկի կշիռներին համապատասխան ռիսկի կշիռներ՝ նաև Ստանդարտ և Փուրզ, Ֆիթչ և (կամ) Մուդիզ վարկանշային կազմակերպությունների կողմից տրամադրված տեղական վարկանիշերի առկայության դեպքում:»,

4) Կանոնակարգ 14-ի 28-րդ կետից հանել «, իսկ 18-րդ կետում՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված վարկանիշերը և վարկանշային մեթոդիկան» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հուլիսի 1-ից: Ընդ որում՝ մինչև 2016 թվականի հուլիսի 1-ը կնքված պայմանագրերի և թողարկված արժեթղթերի նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ ռիսկի կշիռները՝ մինչև ՀՀ կենտրոնական բանկի կողմից տվյալ առևտրային կազմակերպությունների վարկանիշերի դադարեցումը, կամ սույն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանված տեղական վարկանիշերի տրամադրման համակարգի ներդրմանը հաջորդող 6 ամիսների ընթացքում:

Կենտրոնական բանկի կողմից վարկանիշ ստացած ոչ բանկ կազմակերպությունների նկատմամբ պահանջներ	«Ա»-ից «Բ -»	20	«Ա+»-ից «Բ -»	30
	«Գ+»-ից «Գ -»	50	«Գ+»-ից «Գ -»	75
	«Դ+»-ից «Դ -»	100	«Դ+»-ից «Դ -»	150
	«Ե+»-ից «Զ»	150	«Ե+»-ից «Զ»	225

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
18 դեկտեմբերի 2015 թ., N 276-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. դեկտեմբերի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 19.01.2016 թ. (ՀՀԳՏ N3 (546), 1.02.2016):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հուլիսի 1-ի թիվ 194-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով ճշգրտել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող տեղեկատվության կազմը,

հիմք ընդունելով «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հուլիսի 1-ի «Վարկային կազմակերպության գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» կանոնակարգ 13-ը հաստատելու մասին» թիվ 194-Ն որոշմամբ հաստատված «Վարկային կազմակերպության գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» կանոնակարգ 13-ի 18-րդ և 63-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է 2016 թվականի հուլիսի 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
18 դեկտեմբերի 2015 թ., N 277-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. դեկտեմբերի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 19.01.2016 թ. (ՀՀԳՏ N3 (546), 1.02.2016):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով ճշգրտել ռիսկով կշռված ակտիվների հաշվարկը և բարձր իրացվելի ակտիվների հաշվարկում ընդգրկվող տարրերը,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ և 48-րդ հոդվածները, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ժթ» կետը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի ««Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ը հաստատելու մասին» թիվ 39-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 2) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կանոնակարգ 2-ի 34.5 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«34.5. ՀՀ ռեզիդենտ ոչ ֆինանսական կազմակերպությունների արժեթղթեր՝ ընթացիկ (շուկայական) արժեքով, որոնց վարկանիշը հավասար կամ բարձր է վարկանշային գործակալությունների (Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ կամ Մուդիզ) կողմից Հայաստանի Հանրապետությանը տրված՝ մեկ վարկանիշ ցածր վարկանիշից:»,

2) Կանոնակարգ 2-ի հավելված 3-ում՝

ա. 6.19., 6.21.1 և 6.21.2 կետերն ուժը կորցրած ճանաչել,

բ. լրացնել նոր 6.21.3-ից 6.21.6 կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

6.21.3. Հայաստանի Հանրապետությանը վարկանշային գործակալությունների (Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ կամ Մուդիզ) կողմից տրված վարկանիշից բարձր վարկանիշ ստացած ՀՀ ռեզիդենտ ոչ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջներ	0%	0%
6.21.4. Հայաստանի Հանրապետությանը վարկանշային գործակալությունների (Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ կամ Մուդիզ) կողմից տրված վարկանիշին համապատասխան վարկանիշ ստացած ՀՀ ռեզիդենտ ոչ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջներ	0%	10%
6.21.5. Հայաստանի Հանրապետությանը վարկանշային գործակալությունների (Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ կամ Մուդիզ) կողմից տրված վարկանիշից մեկ վարկանիշ ցածր ստացած ՀՀ ռեզիդենտ ոչ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջներ	20%	30%
6.21.6. Հայաստանի Հանրապետությանը վարկանշային գործակալությունների (Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ կամ Մուդիզ) կողմից տրված վարկանիշից երկու վարկանիշ ցածր ստացած ՀՀ ռեզիդենտ ոչ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջներ	50%	75%

գ. լրացնել նոր 7.2 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«7.2. ՀՀ ռեզիդենտ ոչ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջները կարող են ստանալ սույն հավելվածի 6.21.3-ից 6.21.6-րդ կետերով սահմանված ռիսկի կշիռներին համապատասխան ռիսկի կշիռներ՝ նաև Ստանդարտ և Փուրզ, Ֆիթչ և (կամ) Մուդիզ վարկանշային կազմակերպությունների կողմից տրամադրված տեղական վարկանիշերի առկայության դեպքում:»,

դ. 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10. Բանկերը ոչ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջները կարող են կշռել յուրաքանչյուր ակտիվի նկատմամբ սույն հավելվածի 6-րդ կետով համապատասխան արժույթի համար սահմանված «վարկանիշ չունեցող» ակտիվին համապատասխանող ռիսկի կշռով՝ հաշվի չառնելով վերջիններիս անհատական վարկանիշերը: Նման մոտեցման կիրառման դեպքում բանկերը տարին մեկ անգամ ընտրում են սույն կետում նշված մոտեցումը, որով պետք է առաջնորդվեն և տեղեկացնեն այդ մասին Կենտրոնական բանկին՝ մինչև յուրաքանչյուր տարվան նախորդող տարվա դեկտեմբերի 31-ը:»,

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. դեկտեմբերի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 25.01.2016 թ. (ՀՀԳՏ N3 (546), 1.02.2016):

ե. 11-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) այն դեպքում, երբ 6.24-րդ կետը բավարարող պահանջները միաժամանակ բավարարում են 6.17-ից 6.21.6-րդ կետերի պահանջները, ապա տվյալ պահանջը վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկելու նպատակով պետք է հիմք ընդունել 6.17-ից 6.21.6-րդ կետերով սահմանված վարկանիշերին համապատասխան ռիսկի կշիռները:»,

զ. 16-րդ կետի «ա» պարբերությունում հանել «կամ Կենտրոնական բանկի» բառերը,

է. 25-րդ կետի 25.14 ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«25.14. ՀՀ ռեզիդենտ ոչ ֆինանսական կազմակերպությունների կողմից թողարկված պարտատոմսեր, որոնց վարկանիշը հավասար կամ բարձր է վարկանշային գործակալությունների (Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ կամ Մուդիզ) կողմից Հայաստանի Հանրապետությանը տրված՝ մեկ վարկանիշ ցածր վարկանիշից:»,

ը. 25-րդ կետի 25.16 ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«25.16. ՀՀ ռեզիդենտ ոչ ֆինանսական կազմակերպությունների բաժնետոմսեր, որոնց վարկանիշը հավասար կամ բարձր է վարկանշային գործակալությունների (Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ կամ Մուդիզ) կողմից Հայաստանի Հանրապետությանը տրված՝ մեկ վարկանիշ ցածր վարկանիշից:»,

թ. 26-րդ կետի 26.4 ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«26.4. ՀՀ ռեզիդենտ ոչ ֆինանսական կազմակերպությունների կողմից թողարկված պարտատոմսեր, որոնց վարկանիշը հավասար կամ բարձր է վարկանշային գործակալությունների (Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ կամ Մուդիզ) կողմից Հայաստանի Հանրապետությանը տրված՝ մեկ վարկանիշ ցածր վարկանիշից:»,

ժ. 26-րդ կետի 26.9 ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«26.9. ՀՀ ռեզիդենտ ոչ ֆինանսական կազմակերպությունների բաժնետոմսեր, որոնց վարկանիշը հավասար կամ բարձր է վարկանշային գործակալությունների (Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ կամ Մուդիզ) կողմից Հայաստանի Հանրապետությանը տրված՝ մեկ վարկանիշ ցածր վարկանիշից:»,

ժա. ուժը կորցրած ճանաչել 29-րդ կետը,

ժբ. 37-րդ կետից հանել «, ինչպես նաև Կենտրոնական բանկի կողմից վարկանիշ ստացած ոչ բանկ կազմակերպությունների նկատմամբ» բառերը,

3) Կանոնակարգ 2-ի հավելված 4-ում՝

ա. 15-րդ կետի 15.3-րդ ենթակետի «բ» պարբերությունում «, ինչպես նաև Կենտրոնական բանկի կողմից «Բ-» և ավելի բարձր վարկանիշ ստացած ոչ բանկ կազմակերպությունների պարտքային արժեթղթերը» բառերը փոխարինել «, ինչպես նաև ՀՀ ռեզիդենտ այն ոչ ֆինանսական կազմակերպությունների պարտքային արժեթղթերը, որոնց վարկանիշը հավասար կամ բարձր է վարկանշային գործակալությունների (Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ կամ Մուդիզ) կողմից Հայաստանի Հանրապետությանը տրված վարկանիշից:»,

բ. 32-րդ կետի «ա» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա) Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկի, վարկային կազմակերպության կապիտալի գործիք է կամ /ԲԲԲ-/Բաա3/ և ավելի բարձր վարկանիշ ունեցող բանկի կապիտալի գործիք, որը մտնում է սույն կանոնակարգի հավելված 3-ով սահմանվող որևէ բորսայական ինդեքսի մեջ, կամ ՀՀ ռեզիդենտ ոչ ֆինանսական կազմակերպության կապիտալի գործիք է, որի վարկանիշը հավասար կամ բարձր է վարկանշային գործակալությունների (Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ կամ Մուդիզ) կողմից Հայաստանի Հանրապետությանը տրված՝ մեկ վարկանիշ ցածր վարկանիշից, կամ /Ա-/Ա3/ և ավելի բարձր վարկանիշ ունեցող օտարերկրյա ոչ բանկ կազմակերպության կապիտալի գործիք, որը մտնում է սույն կանոնակարգի հավելված 3-ով սահմանվող որևէ բորսայական ինդեքսի մեջ, և»:,

4) Կանոնակարգ 2-ի հավելված 11-ի 2-րդ և 3-րդ կետերը ««էյ-Սի-Թի-Այ-էյ-էմ»-ից (ACTIAM)» բառերից հետո լրացնել ««Բլյու Օրչարդ» Միկրոֆինանսավորման ֆոնդից (Blue Orchard Microfinance Fund)» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հուլիսի 1-ից: Ընդ որում՝ մինչև 2016 թվականի հուլիսի 1-ը կնքված պայմանագրերի և թողարկված արժեթղթերի նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ ռիսկի կշիռները՝ մինչև ՀՀ կենտրոնական բանկի կողմից տվյալ առևտրային կազմակերպությունների վարկանիշերի դադարեցումը, կամ սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «գ» պարբերությամբ սահմանված տեղական վարկանիշերի տրամադրման համակարգի ներդրմանը հաջորդող 6 ամիսների ընթացքում:

Կենտրոնական բանկի կողմից վարկանիշ ստացած ոչ բանկ կազմակերպությունների նկատմամբ պահանջներ	«Ա»-ից «Բ -»	20	«Ա+»-ից «Բ -»	30
	«Գ+»-ից «Գ -»	50	«Գ+»-ից «Գ -»	75
	«Դ+»-ից «Դ -»	100	«Դ+»-ից «Դ -»	150
	«Ե+»-ից «Զ»	150	«Ե+»-ից «Զ»	225

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
21 դեկտեմբերի 2015 թ., N 279-Ն

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 230-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին**

Նպատակ ունենալով վարկային ռեգիստրին բանկերի, վարկային կազմակերպությունների և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի կողմից տրամադրվող տեղեկատվության հաշվետվական ձևերի բարելավման համար ծրագրային ապահովման միջոցների ձեռնարկումը,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը և 35-րդ հոդվածի 3-րդ մասը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մարտի 29-ի թիվ 142-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 230-Ն որոշման 2-րդ կետում «2016 թվականի հունվարի 25-ին» բառերը փոխարինել «2016 նոյեմբերի 1-ին» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
29 դեկտեմբերի 2015 թ., N 292-Ն

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. դեկտեմբերի 29-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 13.01.2016 թ. (ՀՀԳՏ N2 (545)[1], 22.01.2016):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին**

Նպատակ ունենալով ճշգրտել վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկվող ակտիվների ռիսկի կշիռները,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ժթ» կետը, 36-րդ հոդվածի 1-ին մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ը հաստատելու մասին» թիվ 39-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 2) կատարել հետևյալ փոփոխությունը.

1) Կանոնակարգ 2-ի հավելված 3-ի 6.14-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

6.14. Թղթակցային հաշիվներ (այդ թվում՝ անկանխիկ ոսկով) Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում և օտարերկրյա բանկերի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղերում, մինչև երեք ամիս պայմանագրային ժամկետայնությամբ պահանջներ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի և օտարերկրյա բանկերի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղերի նկատմամբ, դրանց գծով հաշվարկված տոկոսներ	20	30

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
30 դեկտեմբերի 2015 թ., N 299-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. դեկտեմբերի 29-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 25.01.2016 թ. (ՀՀՊՏ N3 (546), 1.02.2016):

«Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 149-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի վերաբերյալ [*]

«Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 148-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն **արժեթղթերը հանձնելու (տենդերի) առաջարկը** նույն դասի բոլոր բաժնային արժեթղթերի կամ դրանց որևէ մասի գնման հրապարակային առաջարկն է, ըստ որի՝ առաջարկ անող անձը կամ անձինք (գնորդը) առաջարկում են տվյալ արժեթղթերի սեփականատերերին տվյալ դասի արժեթղթերի 10 և ավելի տոկոսն օտարել (հանձնել) գնորդին:

Օրենքի 152-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է ***արժեթղթերը հանձնելու պարտադիր առաջարկը***, այն է՝ յուրաքանչյուր անձ, որը թողարկողի բաժնային արժեթղթով մեկ կամ ավելի գործարքի հետևանքով դառնում է տվյալ դասի արժեթղթերի ավելի քան 75 տոկոսի սեփականատեր, պարտավոր է տվյալ դասի բոլոր արժեթղթերն իրեն հանձնելու առաջարկ անել:

Իրավակիրառ պրակտիկայում առաջացել է խնդիր՝ կապված արժեթղթերը հանձնելու պարտադիր առաջարկի ողջամիտ ժամկետում իրականացման հետ: Տեղ գտած իրավիճակում ընկերությունը ձևական առումով պահել է օրենքով սահմանված ժամկետները: Սակայն առաջարկի իրականացման իրական ժամկետը եղել է էականորեն ավելի ուշ, քան օրենքով սահմանված մասնակցության չափի ձեռք բերման պահը, որից էլ բխում է պարտադիր առաջարկ կատարելու անհրաժեշտությունը: Հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի քաղաքականությունը տվյալ հարցում պայմանավորված է ***արժեթղթերը հանձնելու պարտադիր առաջարկի նպատակով***:

Արժեթղթերը հանձնելու պարտադիր առաջարկի ինստիտուտը նպատակ ունի ապահովել փոքր բաժնետերերի շահերի պաշտպանությունը: Այդ նպատակն ամրագրված է նաև Արժեթղթերի ձեռքբերման առաջարկի մասին 2004/25/ԵՀ հրահանգում[**], որը հիմք է հանդիսացել ՀՀ օրենսդրության համապատասխան դրույթների համար: Այսպես՝ Հրահանգի 5-րդ հոդվածի 1-ին մասը, որպես փոքր բաժնետերերի շահերի պաշտպանության երաշխիք, սահմանում է, որ արժեթղթերը հանձնելու առաջարկ պարտադիր կերպով պետք է իրականացվի ընկերությունում օրենքով սահմանված մասնակցություն[***] ձեռք բերելու պարագայում: Այդպիսով, փոքր բաժնետերերը հնարավորություն են ստանում անմիջապես վաճառել իրենց բաժնետոմսերը շուկայական ողջամիտ գնով:

Հետևաբար՝ արժեթղթերը հանձնելու պարտադիր առաջարկը պետք է իրականացվի ողջամիտ ժամկետներում: Մինչդեռ Օրենքի առկա կարգավորումը ուղղակի դրույթներ չի նախատեսում արժեթղթերը հանձնելու պարտադիր առաջարկի՝ ողջամիտ ժամկետներում իրականացումն ապահովելու վերաբերյալ:

Օրենքի անհստակությունն ակնհայտ դարձնելու նպատակով պայմանական *Ա ընկերության օրինակով* դիտարկենք արժեթղթերը հանձնելու առաջարկի՝ ոչ ողջամիտ ժամկետներում իրականացնելու պրոցեսը, որպիսին տեղի է ունեցել իրավակիրառ պրակտիկայում:

Իրավիճակը ներկայացվում է փուլերի հաջորդականությամբ՝ համապատասխանաբար համարակալությամբ նշելով ***իրավակարգավորումը*** և ***իրավակիրառ պրակտիկան***:

<u>Փուլ 1</u>

Իրավակարգավորում: Օրենքի 152-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն անձը պարտավոր է արժեթղթերը հանձնելու առաջարկի հայտարարագիրը Կենտրոնական բանկ ներկայացնել համապատասխան գործարքի կատարմանը հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում, որի արդյունքում անձը դարձել է տվյալ դասի արժեթղթերի ավելի քան 75 տոկոսի սեփականատեր:

Իրավակիրառ պրակտիկա: *2015 թվականի հոկտեմբերի 1-ին կայացած գործարքի արդյունքում Ա ընկերությունը դարձել է բաժնետոմսերի 80 տոկոսի սեփականատեր, և նա պետք է անի արժեթղթերը հանձնելու պարտադիր առաջարկ: Օրենքով սահմանված ժամկետի վերջում՝ հոկտեմբերի 15-ին, Կենտրոնական բանկ է ներկայացնում հայտարարագիրը՝ ԿԲ նախնական համաձայնությունը ստանալու նպատակով:*

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2016 թ. հունվարի 19-ին (ՀՀԳՏ N3 (546), 1.02.2016):

[**] *Արժեթղթերի ձեռքբերման առաջարկի մասին եվրոպական խորհրդարանի և խորհրդի 21.04.2004 2004/25/ԵՀ հրահանգ:*

[***] *Մասնակցության կոնկրետ սահմանաչափը սահմանվում է ազգային օրենսդրություններով:*

Փուլ 2

Իրավակարգավորում: Օրենքի 148-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն Կենտրոնական բանկը նախնական համաձայնությունը տալու կամ դրա տրամադրումը մերժելու մասին որոշումն ընդունում է հայտարարագիրը ստանալու պահից՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում:

Իրավակիրառ պրակտիկա: *Կենտրոնական բանկն օրենքով սահմանված վերջնաժամկետին՝ 2015 թվականի նոյեմբերի 5-ին տալիս է իր նախնական համաձայնությունը:*

Փուլ 3

Իրավակարգավորում: Օրենքի 148-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն Արժեթղթերը հանձնելու առաջարկով հանդես եկող անձը պարտավոր է՝ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը ստանալու պահից՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով հրապարակել արժեթղթերը հանձնելու առաջարկը:

Իրավակիրառ պրակտիկա: *Ա ընկերությունը օրենքով սահմանված վերջնաժամկետին՝ 2015 թվականի նոյեմբերի 12-ին, հրապարակում է հայտարարագիրը:*

Փուլ 4

Իրավակարգավորում: Օրենքի 149-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն արժեթղթերը հանձնելու առաջարկի ժամկետը չի կարող պակաս լինել 15 օրից և ավելի՝ 60 օրից: Ըստ էության՝ սա այն ժամանակահատվածն է, որի ընթացքում առաջարկը կարող է ակցեպտավորվել: Սակայն օրենքը չի պարունակում ուղղակի դրույթ առ այն, թե ընկերության կողմից հայտարարվող այդ 15-ից 60 օրվա ժամանակահատվածը երբ պետք է լինի:

Արժեթղթերը հանձնելու պարտադիր առաջարկի էությունից և փոքր բաժնետերերի շահերի պաշտպանության կոնցեպցիայից բխում է, որ առաջարկի իրականացման 15-ից 60 օրվա ժամկետը պետք է մեկնարկի անմիջապես հայտարարագիրը հրապարակելուց հետո: Այդուհանդերձ, հաշվի առնելով օրենսդրական ուղղակի կարգավորման բացակայությունը՝ հնարավոր են չարաշահումներ:

Իրավակիրառ պրակտիկա: *Ա ընկերությունը հայտարարագրում նախատեսում է, որ առաջարկի իրականացման ժամկետն է 2016 թվականի մայիսի 2-ից մինչև 2016 թվականի մայիսի 31-ը:*

Այսպիսով՝ պահպանվում է 15-ից 60-օրյա ժամկետը, սակայն խաթարվում է առաջարկի՝ ողջամիտ ժամկետում իրականացման տրամաբանությունը:

Ըստ այդմ՝ անհրաժեշտ է Օրենքի 149-րդ հոդվածի 1-ին մասը մեկնաբանել Օրենքի 149-րդ հոդվածի 3-րդ մասի համադրությամբ:

Օրենքի 149-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ արժեթուղթը հանձնելու առաջարկն ընդունած անձն իրավունք ունի հետ կանչելու իր ակցեպտը՝ հանձնելու առաջարկի (դրանում փոփոխության) հրապարակման օրվանից հետո ցանկացած պահի՝ մինչև առաջարկի ժամկետի ավարտը: Այսինքն՝ այս դրույթն ամրագրում է ակցեպտի հետ կանչման երկու պարտադիր պայման՝

1. հետկանչը պետք է տեղի ունենա առաջարկի իրականացման ժամկետի ընթացքում,
2. հետկանչը ենթակա է իրականացման հրապարակումից հետո:

Այս պայմանների միաժամանակյա դիտարկման արդյունքում ակնհայտ է դառնում, որ առաջարկի իրականացման ժամկետն անմիջապես պետք է հաջորդի հրապարակման պահին: *Օրինակ, եթե Ա ընկերությունը Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը ստացել է 2015 թ. նոյեմբերի 5-ին և հայտարարագիրը հրապարակել է նոյեմբերի 12-ին, ապա 15-ից 60-օրյա ժամկետը պետք է սկսի հոսել անմիջապես նոյեմբերի 12-ից:* Միայն այդ պարագայում են փոքր բաժնետերերը հնարավորություն ստանում իրացնելու Օրենքի 149-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված ակցեպտի հետկանչման իրենց իրավունքը:

Այսպիսով, նպատակ ունենալով ապահովելու փոքր բաժնետերերի շահերի պաշտպանությունն արժեթղթերի հանձնելու պարտադիր առաջարկի իրականացման գործընթացում,

հաշվի առնելով վերը նկարագրված կարգավորումները,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով,

հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ***պաշտոնապես պարզաբանում է.***

1. Արժեթղթերը հանձնելու առաջարկի իրականացման 15-ից 60-օրյա ժամկետը պետք է նախատեսվի անմիջապես առաջարկը հրապարակելու պահից հետո:

2. Հաշվի առնելով, որ Օրենքի 152-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն արժեթղթերը հանձնելու պարտադիր առաջարկի պահանջը տարածվում է նաև սույն օրենքի 130-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված հիմքով բաժնետոմսերի՝ կարգավորվող շուկայում առևտրի թույլտվության դադարեցման դեպքի վրա, սույն պաշտոնական պարզաբանումը կիրառելի է նաև տվյալ հիմքով արժեթղթերը հանձնելու պարտադիր առաջարկի իրականացման պարագայում:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
21 հունվարի 2016 թ., N 1

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ
ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՀՈՒՆՎԱՐ 2016)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 592-564
էլ. փոստ՝ sd.mpd@cba.am

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝
http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Իրական հատվածի ցուցանիշներ 68

Մակրոտնտեսական ցուցանիշներ

Գների ինդեքսներ

Գնաճ

Գնաճին ամենամեծ նպաստում ունեցող ապրանքատեսակները

Բնականոն գնաճ

Բնականոն գնաճին ամենամեծ նպաստում ունեցող ապրանքատեսակները

Արտաքին հատվածի ցուցանիշներ 71

Ապրանքների արտահանում և ներմուծում

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց ոչ առևտրային նպատակով կատարված փոխանցումները

Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը

ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը

Պետական բյուջեի ցուցանիշներ 76

Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները

Դրամավարկային ցուցանիշներ 77

Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ

Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ

ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ

Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում

Ֆինանսական շուկա 88

Տոկոսադրույքներ

Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը

ՀՀ ԿԲ կողմից սահմանված դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքներ

Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը

Ռեպո շուկայի շրջանառությունը

Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները

Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի

Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները

Պետական (Գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը

ՀՀ եվրոպարտատոմսերով երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները

ՀՀ ԿԲ կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները

Արժութային շուկայում իրականացված գործառնությունները

ՀՀ ֆոնդային բորսայում արտարժութային գործառնությունների ծավալները

Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը

Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը

Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը

Վարկային ներդրումներ 103

Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների

Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության

Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը

Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը

Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների

ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային վարկերը

Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների

Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության

Վարկային կազմակերպությունների այլ վարկային գործառնությունների գործիքակազմը

Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը

Առևտրային բանկերի ավանդներ 113

Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների

Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 115

Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը

ՀՀ բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը

ՀՀ առևտրային բանկային հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը

ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը

Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը

ՀՀ ապահովագրական ընկերությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը

Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի հիմնական ցուցանիշներ

Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ

Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ

Կառավարման վերցված միջոցներ

Պահառության վերցված արժեթղթեր

ՀՀ վճարահաշվարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը

Գրավատների ցուցանիշներ

Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ

Վճարահաշվարկային համակարգ 123

Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ

ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ

ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնությունները ՀՀ տարածքում՝ ըստ սպասարկման միջոցների

ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացված գործառնություններն արտասահմանում

Հաճախորդների և նրանց բանկային հաշիվների քանակը

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՅՈՒՅԱՆԻՇՆԵՐ

Ամվանում	*2015թ. ղեկտեմբեր*	*2015թ. ղեկտեմբերի իրական աճի հնդեքսը 2014թ. ղեկտեմբերի նկատմամբ (%)*	*2016թ. հունվար*	*2016թ. հունվարի իրական աճի հնդեքսը 2015թ. հունվարի նկատմամբ (%)*
Տնտեսական ակտիվության ցուցանիշ		100.7		105.5
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	129815.8	110.8	94430.4	115.7
Գյուղատնտեսության համախառն արտադրանքը *(մլն ՀՀ դրամ)*	70834.1	113.0	16012.2	101.5
Շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	89613.2	97.5	8247.6	105.1
Առևտրի շրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	277984.2	85.9	117958.4	97.3
Ծառայությունների ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	128661.2	100.0	89245.7	105.1
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	733.6	94.0	682.8	105.2
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(ՀՀ դրամ)*	222818[1]	103.3[2]	179309[3]	103.9[4]

ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍՆԵՐ

2016 թ.	*Սպառողական գների հնդեքս*	*Արդյունաբերողների արտադրանքի գների հնդեքս*	*Գների հնդեքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների հնդեքս*
նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	102.2	101.8	98.8	99.7
2016 թ. հունվարը 2015 թ. հունվարի համեմատությամբ	99.6	93.7	102.6	90.7

ԳՆԱՁ

ժամանակաշրջան	*2014*	*2015*	*2016*	*2016*	*2016*
նախորդ ամսվա նկատմամբ (%)				*նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*	*նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)*
Հունվար	2.8	2.5[1]	2.2	2.2	-0.4
Փետրվար	-1.2	- 0.1[1]			
Մարտ	-0.4	-0.1			
Ապրիլ	0.5	-0.4			
Մայիս	-0.8	-0.5			
Հունիս	-1.8	-1.4			
Հուլիս	-0.9	-2.2			
Օգոստոս	0.7	0.1			
Սեպտեմբեր	0.4	0.1			
Հոկտեմբեր	1.0	-0.4			
Նոյեմբեր	1.3	0.6			
Դեկտեմբեր	3.0	1.7			
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	4.6	-0.1			
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	3.0	3.7			

ԳՆԱՁԻՆ ԱՄԵՆԱՄԵԾ ՆՊԱՍՏՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ[5]

Անվանում	*2016 թ. հունվարը 2015 թ. դեկտեմբերի նկատմամբ (%)*	*Նպաստումը գնաճին (տոկոսային կետ)*
ՍԳԻ	**102.19**	
Պարենային ապրանքներ (ներառյալ՝ ոգելից խմիչք և ծխախոտ), որից՝	**4.45**	**2.18**
բանջարեղեն և կարտոֆիլ	31.51	1.77
միրգ	8.51	0.29
ձու	8.30	0.13
կենդանական և բուսական յուղեր	0.60	0.02
կաթնամթերք	0.21	0.01
հացամթերք	-0.06	-0.01
մսամթերք	-0.14	-0.01
Ոչ պարենային ապրանքներ, որից՝	**-0.56**	**-0.12**
գեղահարդարման ապրանքներ	2.20	0.05
դեղամիջոցներ	0.52	0.02
կոշկեղեն	-2.71	-0.04
անձնական օգտագործման մեքենաներ և վառելանյութ	-1.23	-0.05
հագուստ և գործվածք	-3.55	-0.09
Ծառայություններ, որից՝	**0.40**	**0.12**
բնակարանային, կոմունալ	0.97	0.15
կենցաղային բնույթի	1.77	0.02
տրանսպորտի	-1.00	-0.03
կապի	-1.05	-0.06

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՀ[6]

ժամանակաշրջան	2014	2015	2016
նախորդ ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	0.17	0.94[2]	0.04
Փետրվար	-0.45	0.21[2]	
Մարտ	0.02	-0.09	
Ապրիլ	0.14	-0.39	
Մայիս	0.05	-0.14	
Հունիս	-0.19	-0.41	
Հուլիս	0.30	-0.56	
Օգոստոս	0.32	-0.20	
Սեպտեմբեր	0.47	0.08	
Հոկտեմբեր	0.47	0.28	
Նոյեմբեր	0.37	-0.13	
Դեկտեմբեր	1.11	-0.12	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	3.03	3.82[2]	-1.39
Փետրվար	2.35	4.45[2]	
Մարտ	1.82	4.40	
Ապրիլ	1.44	3.83	
Մայիս	1.09	3.50	
Հունիս	0.43	3.26	
Հուլիս	0.63	2.42	
Օգոստոս	0.81	1.93	
Սեպտեմբեր	1.01	1.55	
Հոկտեմբեր	1.15	1.35	
Նոյեմբեր	1.46	0.74	
Դեկտեմբեր	2.75	-0.54	

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՀԻՆ ԱՄԵՆԱՄԵԾ ՆՊԱՍՏՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ[6]

Անվանում	Նպաստումը բնականոն գնաճին (տոկոսային կետ)
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ	
Բնականոն գնաճ. այդ թվում՝	**-1.39**
Ձու	-0.36
Հավի բուդ	-0.29
Խոզի միս	-0.24
Կարագ	-0.19
Օդային տրանսպորտով ուղևորների միջքաղաքային փոխադրման ուղեվարձ	-0.18
Թարմ ձուկ «Իշխան»	-0.14
Ալյուր բարձր տեսակի	-0.14
Շաքարավազ	-0.13
Բուսական յուղ արևածաղկի	-0.12
Բենզին	-0.12
Թռչնի միս	-0.12
Պանիր «Լոռի»	-0.12
Ծառայություններ կարճաժամկետ ապրելու համար կահավորված սենյակների վարձակալության հանձնման	0.09
Կոնֆետներ	0.09
Օծանելիք	0.10

[1] Տվյալները վերանայվել են ՀՀ ԱՎԾ կողմից:
[2] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ ԱՎԾ վերանայված տվյալների հիման վրա:
[3] Ըստ ՀՀ ԱՎԾ նախնական տվյալների:
[4] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ ԱՎԾ նախնական տվյալների հիման վրա:
[5] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա:
[6] Արտաքսման և ճշգրտման եղանակով հաշվարկված:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Ամվաճում	*2015 թ. հունվար – դեկտեմբեր (մլն ԱՄՆ դոլար)*	*2015 թ. հունվար-դեկտեմբերը 2014 թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ (%)*	*2016 թ. հունվար (մլն ԱՄՆ դոլար)*	*2016 թ. հունվարը 2015 թ. հունվարի նկատմամբ (%)*
Արտահանում *(ՖՕԲ)*	1486.9	96.1	89.2	105.6
Ներմուծում *(ՍԻՖ)*	3254.0	73.5	153.2	77.9
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	1767.1	61.4	64.0	57.0

ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	**2015 թվական**					
	Հունվար			**Հունվար – դեկտեմբեր**		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	38371	14301	24070	1001464	282473	718991
ԱՄՆ	11272	5719	5554	177777	99684	78094
Ուկրաինա	700	389	311	8244	8611	-367
Ղազախստան	889	74	814	40082	2393	37689
Գերմանիա	1926	1560	366	36089	32165	3924
Իսպանիա	516	970	-454	8196	15705	-7509
Ֆրանսիա	1159	987	172	21277	18046	3231
ԱՄԷ	940	1912	-972	24255	42093	-17838
Չինաստան	180	3952	-3771	2983	58044	-55061
Թուրքիա	1137	854	282	3516	12938	-9422
Այլ երկրներ	15079	13427	1652	299710	184672	115037
Ընդամենը	**72169**	**44146**	**28023**	**1623592**	**756823**	**866769**

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	**2016 թվական**		
	Հունվար		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	32375	17911	14465
ԱՄՆ	9638	5239	4399
Ուկրաինա	526	457	69
Ղազախստան	749	73	676
Գերմանիա	1798	1415	383
Իսպանիա	620	810	-191
Ֆրանսիա	1708	940	769
ԱՄԷ	1222	1513	-292
Չինաստան	155	4192	-4036
Թուրքիա	244	398	-154
Այլ երկրներ	13472	9569	3902
Ընդամենը	**62508**	**42519**	**19990**


ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ


հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2015 թվական					
	Հունվար			Հունվար – դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	37221	11391	25829	915952	204575	711377
ԱՄՆ	7382	1394	5987	119412	26964	92448
Ուկրաինա	700	330	370	7921	6769	1152
Ղազախստան	661	74	587	17876	2298	15578
Գերմանիա	990	433	558	17289	6551	10738
Իսպանիա	387	184	203	6821	3443	3378
Ֆրանսիա	875	379	495	15246	5302	9944
ԱՄԷ	289	182	107	5793	6957	-1163
Չինաստան	76	645	-568	1190	8775	-7586
Թուրքիա	128	157	-29	1621	3225	-1605
Այլ երկրներ	5560	2277	3283	99349	42221	57129
Ընդամենը	**54267**	**17446**	**36821**	**1208470**	**317080**	**891390**

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2016 թվական		
	Հունվար		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	29837	12529	17309
ԱՄՆ	7167	859	6308
Ուկրաինա	470	409	61
Ղազախստան	547	73	474
Գերմանիա	1121	218	903
Իսպանիա	472	217	255
Ֆրանսիա	928	231	698
ԱՄԷ	283	235	48
Չինաստան	62	469	-407
Թուրքիա	83	128	-45
Այլ երկրներ	5830	2061	3769
Ընդամենը	**46801**	**17429**	**29372**





ԻՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՓՈՒՄԱՐԺԵՔ (ԻՆԴԵՔՍ) [1,2,3]

2015	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ
Իրական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	143.6	149.3	147.8	142.6	135.8	137.6	136.7	140.4	140.7	140.2	142.2	145.2
Անվանական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	243.1	256.3	257.9	253.3	243.7	250.6	254.3	261.1	262.6	263.4	266.3	268.4

2016	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ
Իրական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	148.3											
Անվանական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	273.5											


[1] Հաշվարկի մեջ ընդգրկվել են 12 (նախկինում՝ 11) գործընկեր երկրների տվյալները՝ բացառելով մարդասիրական օգնությունը, բնական գազի, նավթի և ադամանդի առևտուրը՝ 2007-2011 թթ. կշիռներով (նախկինում՝ 2003-2007 թթ.), 1997=100:
[2] Բոլոր տվյալները ներկայացված են ըստ ԿԲ գնահատումների և պարբերաբար ենթակա են վերանայման:
[3] Աճը նշանակում է արժևորում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2015	2016
	Դ [3]	Հ
Համախառն միջազգային պահուստներ	**1771.2**	**1740.2**
Ոսկի	0.0	0.0
ՀՓԻ ԱՄՀ-ում	2.9	1.7
Պահուստային դիրքը ԱՄՀ-ում	0.0	0.0
Արտարժույթ [2]	1768.3	1738.6

[1] Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով:
[2] Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:
[3] Տվյալները նախնական են: Ներառված չեն ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:




ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2015	2016
	Դ [2]	Հ
Համախառն արտաքին պարտավորություններ	**600.7**	**601.4**
ԱՄՀ վարկ	274.3	273.2
ՀՓԻ տեղաբաշխում	122.2	121.7
Այլ վարկեր	203.6	206.0
Այլ պարտավորություններ	0.6	0.5

[1] *Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով: Ընդգրկված են փոխարկելի արտարժույթով և ՀՀ դրամով պարտավորությունները:*

[2] *Տվյալները նախնական են: Ներառված չեն ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*



ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

մլն ՀՀ դրամ

	Պահանջներ Կառավարության նկատմամբ		Կառավարության հաշիվներ և ավանդներ					Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ փոփոխության տեղեկատվական
	Վերջնական տեղեկատվական	Ընդամենը	Կառավարության հաշվին կատարվող գործարքների հսկողական	Կառավարության տեղեկատվական	ՀԻԴ-երի միջոցներ դրամով	ՀԻԴ-երի միջոցներ արտարժույթով	Ընդամենը	
2015								
Դեկտեմբեր	13816	13816	132977	375	0	686	134038	**-120222**
2016								
Հունվար	13898	13898	168864	411	0	693	169968	**-156070**

ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ ԵՎ ՓՈՂԻ ԲԱԶՄԱՐԿԻՉՆԵՐ

